

ԱՐԱՐԱՏ

ԹԻԻ Է.— ՇՐՋԱՆ Ժ. ՏԱՐԻ Ժ.— ՅՈՒԼԻՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՒ ԱԶԳԻ ՎԻՃԱԿ.

Մեծ իմաստութիւն եւ անհրաժեշտ է նախ գիտնալ մեր՝ Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի ներկայ վիճակը, եւ ապա ըստ այնմ խորհել եւ հոգալ արժանաւոր դարմանները։

Եթէ արուեստագէտ եւ հմուտ բժշկին ներելի չէ մի հիւանդ անհատի անգամ տկարութիւնը կանխաւ եւ խորին ուշադրութեամբ չքննած եւ չըհասկացած՝ անմիջապէս խելքին փչած ախեղցփեղ հրահանգ եւ դեղը տալ, նոյնպէս պարտիզպանին՝ իւր պարտիզի պտղոյից՝ անկոց եւ բուսոց եւլն բնութեան եւ պահանջմանց հակառակ խընամք եւ դարման տանել, ապա ուրեմն քանի՛ առաւել ներելի չպիտի լինի ամեն անձանց՝ որք մի որոշ գաղափար՝ ըստոյգ տեղեկութիւն՝ գործնական փորձ ունենալէ եւ կառավարչական կարողութենէ եւ խելքէ զուրկ լինելով՝ Հայոց Ազգի եւ Եկեղեցւոյ վիճակին տեղեակ՝ կարեկից եւ դարմանատու կամին լինել։

Ո՛վ կուզէ՝ թող լինի, միշտ կարող է բանագէտ ձեւանալ, եւ լոկ բերանով շատ բանի փորձառութիւնք կեղծել, մեծ մեծ տեսութիւններ բըլթել, այս եւ այն անձանց՝ պարագայից եւ անցից համար կարեկցութիւն ցուցանել եւ վերջապէս դարմաններ առաջարկել։ Բայց ներհուն եւ արդարեւ փորձառու անձանց գործ է այնպիսեաց տգիտութիւնը՝ հակասութիւնքը եւ ապիկարութիւնքը անմիջապէս հասկանալ եւ զգուշանալ, մինչ միամիտ եւ հասարակ անձինք ոչինչ իմանալով կամ իմանալ չկարողանալով՝ գուցէ ճարտարագրիչ եւ ճարտարախօս լեզուագարութիւններէն կ՚յափշտակուին եւ կխաբուին։ Եւ ահա այս մեծ պակասութիւնն է՝ որ այժմ մեր մէջ ընդհանրանալոյ երեւ

բռնած է եւ բաւական վնաս կտայ՝ եթէ չասեմ մինչեւ անգամ մի կերպ ծանր վտանգ կսպառնայ։

Ցիրաւի Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի բազմակարօտ ներկայ վիճակը եւ բազմատեսակ հանգամանքը ճշտիւ ամփոփել եւ նկարագրելը շատ դժուարին է, ինչպէս նաեւ անհրաժեշտ եղած յոգնատեսակ եւ բազմաթիւ պէտքերը եւ դարմանները սակաւ միջոցի մէջ եւ գիտութեամբ հոգալը անկարելի է, սակայն կենսական եւ անմիջական կարօտութիւնքը եւ պէտքերը հոգալը ինչպէս անշուշտ կարեւոր է, նոյնպէս բազում դժուարութեանց յաղթելով փորձառութեամբ զարժանն տնօրինելը վսեմ եւ նուիրական պարտաւորութիւն է մեր Ազգի եւ Եկեղեցւոյ Գլխոյն եւ Առաջնորդաց խորհրդակցութեամբ եւ աջակցութեամբ բանագէտ եւ ձեռնհաս ազգայնոց։

Կտեսնեմք ի ներկայիս՝ զի համեմատաբար՝ խօսողները՝ զանազան տեսութիւններ՝ գիտողութիւններ շռայլողները եւ բազմախուռն առաջարկութիւնք եւ դարմանք այս եւ այն կարօտութեանց համար՝ խիստ շատ՝ եւ աւելի ճիշտը՝ չափազանց են, իսկ գործողքը եւ արդեամբք անձնանուէր ջանացողքը խիստ քիչ են, եւ ուր խօսողը շատ եւ գործողը քիչ կլինի՝ բնականաբար սակաւ գործ եւ իրական բարի արդիւնք կտեսնուին։

Նկատեցէք գէթ վերջին մի քանի տարիներում մեր մէջ հրատարակեալ ամսագիր, լրագիր եւ բանասիրական գրքոյկները, եւ ահա մի ահագին եւ անելանելի «ճաքէ-քէնէու»՝ եւ աշտարակաշինութեան խառնախօսներու բազմաթիւ խմբեակներ կգտնէք։

Այսքան հրատարակութեանց գրեթէ շատին համար իսպառ ձայն բարբառոյ յանապատի էին եւ եղան ասելով՝ ոչ կըմեղանչեմք եւ ոչ կըսխալուիմք, սակայն պէտք չէ այսքանով զանցառութեամբ բոլորը եւ անցնիմք. այո՛ պէտք է հետազօտեմք մանաւանդ մի քանի գըրուածքները եւ հեղինակները գիտնալոյ եւ զգուշանալոյ համար՝ թէ ինչ տեսակ զզուելի սկզբունք՝ գաղափար՝ օտարանիւթ նպատակ եւ դաւադրութիւնք՝ ինչպէս նաեւ սարսափելի հրէշ անձինք կան մեր մէջ՝ որք այլ եւ այլ դիմակներով եւ խաբուսիկ յոյս եւ օգտակար խոստումներով Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի գոյութիւնը եւ ապագայն հիմն ի վեր տապալելոյ գործիքներ եղած են։

Դիտեցէ՛ք՝ ի՞նչ են եւ ուստի՞ կթելադրուին Հայոց Ազգի միութեան մէջ կըէ-քաղական՝ կրօնական՝ տնտական եւ այլն երեւակայական վնասակար սկզբունք տեսնելով՝ խտրութիւններ ձգելը, դարաւոր ժամանակներէ հետէ եւ դարաւոր վըտանգներու դիմակալելով զԱզգ մեր եւ զԵկեղեցի պաշտպանող՝ փրկող եւ կառավարող Եկեղեցական Վարչութեան դէմ զինուելով եւ զայն տապալել երազելով՝ ուրիշ . . . . վարչութիւն հիմնել ջանալը, աչքին առջեւը կատարուած իրական սոսկալի բարբարոսութիւնքը եւ հարստահարութիւնքը կարծես չտեսնելով՝ նոցա վերայ լուռ մընալը, եւ անդին . . . . մի թեթեւ

շիւղը գերան կարծելով եւ դիտմամբ ձեւացնելով՝ Ազգի ընդհանուր շահուց դէմ դաւաճանելը, ազգային գործոց եւ ընթացից վատ գոյն՝ եւ փոխարէնը կարծես Ջինական ուղղութիւն եւ գործերը ջատագովել եւ պաշտպանելը՝ յաւէտ օտարին գործիք լինելով սխմխայն անձնամոլ շահադիտութեամբ: Դիմակաւորաց ընթացք եւ արդիւնքէն այսքան համառօտ քաղուածքը եւ հաւաստիքը բաւական թող լինի *):

Արդ կերկրորդեմք՝ զի Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի ներկայ վիճակը պէտք է նախ քաջ ճանաչեմք եւ կշռեմք, եւ ըստ այնմ ապա դարմանեմք:

Մեր՝ Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի ներկայ վիճակի անհրաժեշտ կարօտութիւնըն է՝ կենդանութիւն, լոյս եւ յառաջադիմութիւն: կենդանութիւն՝ բարոյական եւ նիւթական, կենդանութիւն եւ պայծառութիւն համանգամայն Ազգի եւ Եկեղեցւոյ. լոյս մտաւորական եւ բարոյական, եւ յառաջադիմութիւն երկրագործութեան՝ արուեստից՝ վաճառականութեան եւ աշխարհավարութեան մէջ: Երբ առքօք կզարգանամք՝ այնուհետեւ արդարեւ մեղ ոչ ինչ չպակասիր:

Եթէ դիմակաւորաց ամեն մի ատելի եւ զզուելի շարժում՝ ամեն մի կեղծաւորութիւնք եւ խաբեբայութիւնք՝ ամեն մի զրպարտութիւնք եւ խարդաւանութիւնք նկարագրել կամենամք, պէտք է ամեն գործ եւ զբաղմունք ի մի կողմ ծալել՝ եւ երկար ժամանակ հետեւել, որպէս զի ըստ արժանւոյն նկարագրուի. սակայն բանագէտ անձինք քիչէն եւս կարող են շատ բան իմանալ եւ իւր անձը եւ զայլս զգուշացնել, եւ այս նպատակաւ է որ՝ մեք միշտ համառօտ տեսութեամբ կանցնիմք եւ այն դուն ուրեք մի քանի ծանրակշիռ վատթարագոյն սկզբանց եւ ուղղութեանց դէմ:

Խելամուտ եղէք եւ կարեկցեցէք՝ պարոն դիմակաւորներ, ուշադրութեամբ դիտեցէք եւ զգացէք Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի վիճակը՝ անհրաժեշտ կարօտութիւնքը եւ դարմանները, եւ ըստ այնմ եթէ կարող էք՝ անկեղծ ու անենդ ոգւով եւ սիրով միացէք եւ գործեցէք ողջամիտ եւ բանագէտ Հայոց հետ, ապա թէ ոչ՝ աւելի մեծ բարութիւն եւ շնորհ կհամարուի՝ եթէ լռութիւնը սիրէք եւ խանգարիչ միջամտութիւններէ զգուշանաք կամ իսպառ հեռանաք, որպէս զի միայն ձեզապիսեաց քաջածանօթ եղած անձրեւէն ապահովուիլ երեւակայած ժամանակներդ՝ կարկուտի դառն եւ մահաբեր հարուածոյն ենթարկուելոյ առաջնորդ չդառնաք:

Վ. Ե. Մ.

(*) Ուրիշ բարեպատեհ յօդուածում կտեսնուիմք նաեւ այն ալանդակ դիմակաւորի հետ՝ որ մինչեւ անգամ հասարակ շարականաց և թեթեւ երգոց՝ միանգամայն եկեղեցական պարզ արարողութեանց եւ գէթ միջակ կերպով տեղեկութիւն եւ հմտութիւնչունենալով՝ եկեղեցական ձայնագրեալ շարականաց՝ երգեցողութեանց և արարողութեանց դէմ խծբծանք կլեզուագարէ:

ՆԻԿՈԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԴԱՐՁԻՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ
Ի ԿԱԹՈՂԻԿՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն և վերջ.)

ԺԱ.

Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ խռովութիւն սերմանող լատին քարոզչաց մէջ անուանի էր այն ժամանակները, այս ինքն 1637 ին, Պօղոս Փիրմալի կամ Փիրոմալ անունով Իտալացի Դոմինիկեան կրօնաւորը, որ կասուի նաեւ Պօղոս Սիւքերնացի, թեթեւամիտ ու յանդուգն մարդ, ինչպէս յայտնի է գրուածքներէն ու գործողութիւններէն *): Սա Հայաստան գնացեր էր 1631 ին, Մովսէս Կաթուղիկոսին հետ տեսնուելով ու նորա բերնէն քանի մի յարգութեան խօսքեր (°) առնելով' Հռովմայ պապին համար, միտքը դրել էր թէ Հայերը կաթոլիկ պիտի անէ. Կաթուղիկոսին ձեռքէն թուղթ եւս առաւ առ պապն եւ գնաց Նախջուան, Ապարաներ կոչուած լատինահայոց պատմեց: Նոքա, որ այն ժամանակին հայաստանեայցները կամ Լուսաւորչական հայերը կրնային համարուիլ, մոքերն դրած էին' թէ Հայք հերետիկոս ու հերձուածող են, — ուստի այնպիսի թեթեւ քաղաքավարական խօսքերով շուտ կաթոլիկ չեն կարող լինել, Հռովմայ եկեղեցւոյն հետ չեն միաբանիր, եւ նոցա միաբան ըմբռնելն ամենեւին բանի չի գար, — այնչափ խօսք խառնեցին, այնչափ շփոթութիւն ձգեցին ազգին մէջ' որ բանը Նախջուանի այլազգի իշխանին ականջը հասաւ, եւ նա բռնեց Փռանկ քահանան բանտ դրաւ' իբրեւ լրտես եւ խռովարար: Շատ աշխատեցաւ Կաթուղիկոսն որ ազատէ զինքը բանտէն, ճար չեղաւ. վասն զի զինքը մատնողները իւր կրօնակից Դոմինիկեաններն էին:

Վերջապէս երկու տարիէն հազիւ ազատեցաւ Փիրոմալը բանտէն, գնաց Էջմիածին, շատ սիրով ընդունելութիւն գտաւ Փիլիպպոս Կաթուղիկոսէն, եւ այնտեղ տրամաբանութիւն դասկուտար աշակերտաց: Իսկզբան' չափազանց եռանդով սկսաւ վիճել միաբաններուն հետ' թէ Հռովմայ եկեղեցւոյն ու Հայոց դաւանանքին մէջ տարբերութիւն չկայ ամենեւին. միտքը այն էր որ այս ասելով' զՀայերը Հռովմէական դար-

(*) Այս բախտախնդիր խառնակէն և չարաչէն քան թէ տգէտէն ասուելու արժանի քահանային բնաւորութիւնը փոքր իշատէ կհասկացուի նաև հետագայ արտավիպէն: Տաճկաստանէն Եւրոպայ դառնալէն յետոյ' իւր միամիտ հայրենակիցներէն մէկը բազմութեան մէջ կհարցնէ Փիրոմալին' թէ «Հայր' այսքան ժամանակ որ Տաճկաստան եւ Պարսկաստան քալեցիր ու քարոզեցիր, արդեօք որքան մահմետականներ դարձի բերիր քրիստոնեայ արիր»: Փիրոմալը ի՞նչ պատասխան տայ. «Մահմետականները քրիստոնեայ անե՞լ, կասէ' աչքիրը աւելի բանալով. մարդ Աստուծոյ, գոհ չե՞ս որ ես մահմետական չդարձայ»: Գուցէ կինացը մէջ քիչ անգամ պատահած էր խեղճին այսպիսի անկեղծ խոստովանութիւն անել.

ձրնէ։ Բայց խոհական Կաթուղիկոսը լաւ հասկացուց տրամաբանութեան անտրամաբան վարժապետին՝ թէ նորա արած դատողութիւնը ծուռ է. «Մեք «արդէն այդպէս գիտէինք՝ ասաց Կա«թուղիկոսը, այժմ որ դուն եւս այդ«պէս հասկացար, ինչու համար ըն«դունայն վէճերու հետ կլինիս ու շը«փոթութիւն կձգես վանքին մէջ»։ Որչափ հարկաւոր էր այս խրատը նաեւ մեր ժամանակի Հայ եւ լատին քարոզիչներուն՝ որ յերկուս հետս կըկաղան։

Հասկացաւ Փիրոմալին որ Կաթուղիկոսը իրաւունք ունի, եւ ձայնը քաշեց գէթ առ ժամանակ մի. եւ որովհետեւ այն միջոցներումն Էջմիածին ու Երեւան ոտնակոխ եղան պատերազմող զօրքերէ, եւ վանքին միաբաններն աստիս անդին ցրուեցան, Փիրոմալը քարոզութիւն կանէր Հայաստանի ուրիշ գեղերն ու քաղաքները՝ առանց կրօնական վէճեր գրգռելու։ Պօլիս եւս գնաց, եւ Լուսաւորչայ եկեղեցւոյն մէջ քարոզ կուտար՝ Փիլիպպոս Կաթուղիկոսէն առած իշխանութեամբը համեմատ. բայց որովհետեւ լատին էր ազգաւ եւ սրտով, միշտ կաշխատէր որ Հայերը Հռովմայ աթոռոյն հնազանդեցընէ, եւ այն պատճառաւ պապին ու Փրոփականտայի ժողովոյն առաջ մեծ պատիւ ունէր։ Նորա փոքր իշատէ նմանութիւն ունեցող մարդիկ այս օրուան օրս եւս գտնելը դժուար չէ։

Այս Պօղոս Փիրոմալին գրեց Ուրբանոս Ը. պապը, կամ թէ պապին կողմանէ Փրոփականտայի ժողովը, որ երթայ Լեհաստան, եւ ժողովուրդը Նիկոլին հետ հաշտեցընէ. ասել կլինէր թէ համոզէ ժողովուրդը որ հնազանդին Նիկոլին. ինչպէս որ ասոր քսան տարիի չափ առաջ Կաւտէ անունով Դոմինիկեան Իտալացին եւս Պօլիս յուղարկուեցաւ այժմու պապէն՝ որ Գերհասունեանը իւր ժողովրդեանը հետ հաշտեցընէ, եւ յետոյ նոյն Պիոս Թ. պապը յուղարկեց նոյն մայրաքաղաքը՝ նոյն նպատակով՝ Գեր. Փլ––ճ եպիսկոպոսը։

Նոյն յանձնարարութիւնն արած էր արդէն Փիրոմալին Փիլիպպոս Կաթուղիկոսը՝ նորա Էջմիածնէն ելած ժամանակը. կկարծէր բարեսիրտ Կաթուղիկոսն որ Նիկոլին յայտնի անզգամութիւնը վերջապէս պիտի դադրի եւ ժողովրդեան անմեղութիւնը յաղթանակ պիտի կանգնէ։ Նոյնպէս կարծեց բարեմտութեամբ նաեւ Պօլսոյ ժողովուրդը՝ երբ Փիրոմալը Լուսաւորչայ եկեղեցւոյն մէջ քարոզելով իմացուց թէ ինչ պատճառաւ ինքը Իլվով պիտի երթայ, եւ ուրախացաւ։

Փիրոմալին ինչ մտքով Լեհաստան դառնալն աւելի լաւ հասկացաւ Լեհայ թագաւորը. ուստի իւր խորհրդականներէն չորս հոգի յուղարկեց նորա առջեւն որ հարցնեն թէ ինչ պատճառաւ եկել է։ Երբ պատասխան տուաւ Փիրոմալը՝ թէ պապին հրամանաւը եկել է Հայոց մէջ հաշտութիւն անելու, ասացին խորհրդականները. «Եթէ Նիկոլին կողմը բռնես, բան չես կարող շահել, վասն զի իրաւունքը ժողովրդեանն է» եւ սկսան մի առ մի առաջը դնել ժողովրդեան իրաւունքները։ Փիրոմալ Նա-

ցեցաւ որ խորհրդականները ամենեւին իրաւունք տալ չեն ուզեր Նիկոլին, եւ ոչ ժողովուրդը նորա կամացը խոնարհեցընել՝ կաթոլիկութիւնը յանձն առնելու՝ դարձաւ ասաց նոցա՝ թէ «Այդ ձեր բռնած ճանապարհը հաշտութիւն անելու ճանապարհ չէ»։ Հարցուցին խորհրդականները՝ թէ «Հապա դուն ի՞նչ ճանապարհ պիտի բռնես որ այդ բանդ յաջողի»։ — Թագաւորին միայն կասեմ» պատասխանեց Փիրոմալ։ Յայտնի բան է որ պապին կողմանէ հրաման ունէր այս եւ այն պահանջմունքներն անելու ժողովրդէն, — որոց իմկութիւնը կամ գլխաւորն էր՝ կաթոլիկ դառնալը, — եւ անով անել հաշտութիւնը։ Այսպէս եղած են միշտ պապին եւ պապականաց ամեն տեղ արած միջնորդութիւնները. որով հաշտութիւնն ու խաղաղութիւնը մօտենալու տեղ՝ աւելի եւս հեռացած է ամեն ժամանակ։

Փիրոմալը թագաւորին առջեւն ելաւ ու պապին հրամանագիրը ցուցուց. եւ յետ երկար խօսակցութեանց՝ հրաման ընդունեցաւ որ երթայ Հայոց եկեղեցին, այնտեղ ժողովէ Հայերն ու յայտնէ նոցա իւր միտքը։ Գնաց խօսեցաւ, ոչ թէ խեղճ ժողովրդեան անկապտելի իրաւանցը վերայ՝ զոր Նիկոլ յափշտակել ու ոտքի տակ առել էր, այլ կաթոլիկութեան նշան համարեալ հաւատոյ մասանց վերայ։ Կուզէր որ Հայերը Քաղկեդոնի ժողովը իբրեւ [illegible] ընդունին, եւ Քրիստոսի Տեառն մերոյ աստուածային եւ մարդկային բնութիւն ունենալն՝ բոլորովին ըստ լատինացւոց դաւանին։ Անխիղճ քարոզիչը չէր մտածեր որ իւր արած վարդապետութիւնը եթէ ճշմարտութիւն եւս լինէր՝ այնպիսի խնդիր էր որ խորին աստուածաբանները անգամ առանց երկար բացատրութեանց չեն կարող իրարու դէմ փոքր իշատէ հասկացնել, թող թէ խեղճ աշխարհական անհմուտ ժողովուրդը. չէր մտածեր կասեմ, վասն զի չէր կամենար որ իւր խօսքին դէմ կեցող գտնուի։

Պատասխան տուաւ ժողովուրդը թէ՝ «Մեք երեք առաջին ժողովները միայն «կճանաչեմք, եւ նոցա վարդապետու- «թեանը կհետեւիմք. չորրորդ, այս ին- «քըն Քաղկեդոնի ժողովը՝ չեմք ճանա- «չեր. բայց եթէ նորա վարդապետու- «թիւնն եւս առաջիններուն վարդա- «պետութեանը նման, եւ ըստ ամենայ- «նի համեմատ է, զայն եւս չեմք մեր- «ժեր։ ԶՔրիստոս չարչարեալ Աստուած «եւ չարչարեալ մարդ կդաւանիմք, բայց «երկու բնութիւն ասելէն կզգուշանամք «որ երկու անձն չհասկացուի։ Իսկ Դէ- «ոսկորոսը արդէն մեր երգերուն մէջ «չեմք յիշեր, վասն զի մեր Հոգեւոր «Տէր Մովսէս Կաթուղիկոսն եւս պա- «տուիրած է մեզ որ նորա յիշատակու- «թիւնը չանեմք»։

Այսպիսի բացատրութիւններ լսելէն յետոյ՝ կերեւի որ եթէ Փիրոմալին միտքը՝ այնչափով գոհ պիտի լինէր. սակայն Նիկոլ չէր կրնար գոհ լինել, կուզէր որ ժողովուրդը բոլորովին եւ ամեն բանի մէջ իւր կամացը խոնարհի։ Նո՛ր ապացոյց եւ հերքումն սնոտի յուսոյ այն Հայոց՝ որ կարծեն թէ Հռովմայ աթոռոյն եւ հռովմէականաց հետ կարելի

է միաբանիլ՝ առանց ազգային իրաւունքները կորսնելու. պէտք գիտնան այնպիսիներն որ ինչպէս սուրբ Հաւատոյ մասունքը անփոփոխելի են, այսպէս եւս հռովմէականք դրած են մտքերն թէ իւրեանց պաշտօնէութիւններն մէկ մէկ հաւատոյ մասանց պէս անհրաժեշտ հարկաւորութեամբ հարկաւոր են [illegible] ասելու համար։ Հաւատոյ մասանց մէջ մոլորութիւն չունիմ կասես, ու յայտնապէս կըցուցընես. այն բաւական չէ, պէտք է որ պապին եւս հաւատաս։ Այն բաւական չէ, ազգային եկեղեցիէդ պէտք բաժնուիս, ազգիդ սեպհական առաջնորդներէն պէտք ապստամբիս եւ օտարին հնազանդիս, որպէս զի ուղղափառ ճանչցուիս։ Գուցէ պապին մեծ հայրապետ, եւ օրինաւոր յաջորդ Պետրոսի եղածը կճանչես, այն բաւական չէ. պէտք է զինքը ճանաչես նաեւ միմիայն գլուխ եկեղեցւոյ եւ հրամանատար ամենայն պատրիարքաց։

Հասկացան այս բանս նաեւ Իլվովցիք, ու չխոնարհեցան Նիկոլին. եւ այնչափ իրաւունք ունէին՝ որ Փիրոմալն եւս չը կրցաւ զնոսա բռնադատել. ընդհակառակն, ելաւ Հռոմ գնաց ու հասկացուց պապին ժողովրդեան իրաւունքները եւ Նիկոլին անիրաւութիւնները։

Սորա հաստատութիւնն ունիմք նաեւ Իլվովի օրագրին մէջ, որ Բժշկեան Հ. Մինաս վարդապետը օրինակած ու իւր ճանապարհորդութեանը մէջ տպած է, Հայու գրով թաթարերէն այսպէս. «1639, [illegible]» «— [illegible] «[illegible] «[illegible] «[illegible] «[illegible] «[illegible] Ա. Պ. [illegible] «[illegible]). [illegible] «[illegible] «[illegible] «[illegible] «[illegible]։» Այս ինքն, «1639, Յուլիս 2 ըստ նոր տոմարի։ — «Հայր Պօղոս դոմինիկեան կրօնաւորին «հետ դաւանութեան վերայ խօսեցանք «ու հասկացուցինք. նա մեր դաւանու«թեանը հաւնելով ստորագրութիւն «ալ տուաւ, վկայելով որ սոքա լաւ կա«թոլիկ (ուղղափառ) են. գրեց նաեւ «թագաւորին ու արքեպիսկոպոսին. յէ«կաթին (այս ինքն Պապի նուիրակին) «եւս հասկացուց որ մեր անիծած Նի«կոլ եպիսկոպոսը զմեզ չարութեամբ «վատահամբաւ կանէ, ասելով թէ՝ մեք «հերետիկոս եմք, որպէս զի զմեզ աչքէ «հանէ։»

Մինչդեռ պապը կմտածէր որ նորէն Իլվով դարձընէ Փիրոմալն՝ որ հաշտութեան հնարք գտնէ ու ժողովրդեան խնդիրը կատարուի, Նիկոլ անձամբ հասաւ Հռովմ, ու եզուիտներուն օգնականութեամբը արգելք եղաւ հաշտութեան եւ խաղաղութեան, այնպէս որ Փիրոմալն Իլվով որ դարձաւ՝ բան չկարողացաւ անել, ելաւ գնաց նորէն Հայաստան 1642 ին։ Իսկ խեղճ ժողովուրդըն նոյնպիսի անտանելի հալածանքի չդիմանալով, եւ խաբեբայ մարդկանց սուտ խոստմունքներէն ձանձրա-

ցած լինելով, սկսաւ հետզհետէ աւելի եւս ցրուիլ Խլվովէն ու շրջակայ գաւառներն ու քաղաքները երթալ բընակիլ աղքատութեամբ ու տրտմութեամբ. այնպէս որ յիսուն հազարէն հինգ հազար հոգի հազիւ մնացին Իլվովի մէջ ու մօտերը, եւ նոքա եւս կուզէին ելլել երթալ *):

Այն ժամանակ հասկացաւ Նիկոլ որ արածը վատ էր, այս ինքն հասկացաւ որ իւր փառասիրութեանն ու շահասիրութեանը վախճանին չհասաւ. կորսընցուց ժողովուրդս կաթոլիկ արք ասելուն պարծանքը, միանգամայն նոցա հարըստութիւնը քաղելու եւ արիւնը խմելու յոյսը. սկսաւ կեղծաւորութեամբ հաշտութեան ետեւէ ընկնիլ, բայց խօսքին մտիկ անող չգտնուեցաւ. որով եւ ինքն օրէ օր աղքատացաւ, եւ ամենուն երեսէն ընկած՝ ինչ անելիքը չէր գիտեր:

ԺԲ.

Տասը տարի այս կերպով անցնելէն յետոյ, լսեց Նիկոլ 1652 ին՝ թէ Փիլիպպոս Կաթուղիկոսը Երուսաղէմ գնացել եւ անկից Պօլիս եկել է, մտածեց որ ինքն եւս այնտեղ երթայ, Կաթուղիկոսին ընկնի՝ որպէս զի այս բաներուս մէկ ճարը գտնուի: Այն օրերը Նւգո-

(*) Լսելու արժանի բան է թէ ինչ կերպով կհամառօտէ այս անցքերը բարեխիղճ և ճշմարտախօս Առաքել պատմիչը. — խօսքերուն մէջ աւելի գիտողութեան արժանաւոր բառերը կընտրենք. «Այլ և ի սոյն ժամանակի ի կարգէն Դոմինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ոմն, որ «[illegible] յազգէն Փռանկաց, եկն «յերկիրն Նախջուանայ ի մէջ [illegible] (ու-«նիթոռաց) որք անդ կան. և Փիլիպպոս Կա-«թուղիկոսն բազում սէր և բարեկամութիւն «արար ընդ Պօղոսին այն՝ [illegible] «[illegible] Լովայ: Եւ Պօ-«ղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամե-«ցաւ գնալ ի Հռոմ, և գնալով զճանապարհս «իւր հանդիպեցաւ ի Լով քաղաք, և Լովացիք «ևս բազում աղաչանօք խնդրեցին ի Պօղոսէ և «բազում մեծարանս արարին նմա, և [illegible] «[illegible] առ ի թոշակ ճանապարհին [illegible] «նմա, զի թերևս զօգնութիւն ինչ հնարեսցէ «նոցա ի դուռն Փափին. Եւ յորժամ եհաս «Պօղոս ի Հռոմ, և մինչ նա զբանս ինչ բարե-«խօսութեան վասն Հայոց առաջարկեալ էր, և «խօսէր ի դուռն Փափին. վաղվաղակի գնաց «զկնի նորա և Նիկոլ եպիսկոպոսն ի Հռոմ ի «դուռն Փափին, և խափանեաց զօգնութիւնն «Պօղոսի [illegible]: Եւ այս-«պէս յամենայն կողմանց խափանեցաւ փրկու-«թիւն և օգնութիւն տառապեալ ժողովրդեան «Լովայ քաղաքին. և ընդ Պօղոսին գնացողքն «տրտմեալ և ունայն դարձան անտի։

«Եւ Նիկօղ եպիսկոպոսն ևս դարձաւ ի Հռո-«մայ և եկն ի Լով քաղաք, և կեայր ըստ ա-«ռաջնոյ վարուց իւրոց, և ևս առաւել անա-«ռակ. և զվերոյ ասացեալ զրեանսն և զորբու-«թեան անօթսն և զամենայն աւանդս եկեղե-«ցւոյն՝ զորս վաճառեաց և զորս կաշառս բաշ-«խեաց, և զորս ձեռամբ Հրէից խորտակեալ «արար արծաթ և վաճառեաց, և զայնքան «զբազում և զանթուելի ինչսն և զգանձս «ցիր և ցան արարեալ բնաւին վատնեաց, որ «ոչինչ մնաց, միայն լոկ դատարկ քարեայ եկե-«ղեցին. զի կեայր անառակ և զեղխ և շուայ-«տոտ վարուք յայտնի և համարձակ՝ յոչ ու-«մեքէ վեհերելով։ Եւ բազում զրեանք և ա-«նօթք ի Նորին վաճառելոցն [illegible] Հայոց «[illegible], զորս վաճառականք գնով «առեալ բերին, որ [illegible]»․ ԻԸ։

կւայէն մահտեսի Մարկոսի որդի Սիմոն անունով վաճառական մի եկած էր Իլ- վով· սա Նիկոլին ինչ մարդ լինելը չը- գիտնալով՝ հաւատաց նորա խօսքին ու հանեց երկու հազար դահեկան տուաւ որ կարենայ այն ճանապարհոր- դութիւնն անել: Իլվովցիք Նիկոլին գի- տաւորութիւնը հասկացան՝ իրենք եւս դատաւորներէն Խաչկօ անունով մէկը յուղարկեցին Փիլիպպոս Կաթուղիկո- սին· եւ նա գնաց Նիկոլին գնալէն ա- ռաջ ամեն բան պատմեց հասկացուց նորա, եւ ժողովրդեան խնդիրքը իմա- ցուց որ սոքա էին:

Ա, Նիկոլ սուրբ Լուսաւորչին եւ նո- րա յաջորդող Հայրապետաց· եւս եւ նոցա հետեւողաց՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց դաւանանքը խոստո- վանի եւ դաւանի:

Բ, Հայաստանեայց եկեղեցւոյ ծէսե- րը, տօները, պատարագի եւ ուրիշ պաշ- տամանց կարգերը պահէ եւ չփոխէ:

Գ, Նիկոլին վախճանելէն յետոյ՝ նո- րա տեղը եպիսկոպոս նստողը էջմիած- նայ Կաթուղիկոսէն ձեռնադրուած լի- նի եպիսկոպոս, նորա հրամանովը այն վիճակին առաջնորդ հաստատուի, եւ նոյն Կաթողիկոսին հնազանդ եւ հե- տեւող մնայ:

Դ, Սուրբ պատարագի բաժակին մէջ ջուր չխառնէ:

Ե, Եկեղեցականները, թէ եպիսկոպոս՝ թէ քահանայ՝ թէ սարկաւագ, բնաւ չյիշատակեն Պապին անունը: Նոյնպէս եւ Նիկոլէն յետոյ նորա տեղը նստող եպիսկոպոսը չյիշատակէ ամենեւին Պա- պին անունը, այլ միայն Նիկոլ, եւ այն պատարագին մէջ միայն:

Տարակոյս չկայ որ այս պայմաններն ու դգուշութիւնները մեծ խոհեմու- թեամբ եւ հեռատես իմաստութեամբ դրաւ Փիլիպպոս Կաթուղիկոսը, վասն զի լաւ հասկացած էր՝ թէ Պապին եւ պապականաց հետ պայմանադրութեան մտնել կամ ամենեւին չլինիր, եւ կամ՝ եթէ հարկը պահանջէ՝ ամենեւին այն- պիսի զիջողութիւն պէտք չէ անել նո- ցա, վասն զի որքան որ տաս՝ միշտ ա- ւելին կպահանջեն, եւ անմեղ ու ան- վնաս մէկ խօսքէ մեծամեծ հետեւանք- ներ կհանեն: Ո՞չ ապաքէն նոցա այս սկզբունքին հետեւանքն է՝ որով, օրի- նակի համար, Պետրոս առաքելոյն ա- նուանը վէմ նշանակութիւնն ունենալէն շղթայի պէս օղակ օղակ հետեւանքներ իրարու անցընելով՝ բանը մինչեւ այն աստիճանի կհասցնեն, որ այսօրուան օրս չեն ամաչեր ասելու՝ թէ Պապը մի մի- այն փոխանորդն է Քրիստոսի՝ ի վերայ երկ- րի· այլ եւ Թագաւոր Թագաւորաց եւ Տէր Տերանց, անսխալ փոխանորդ Աստուծոյ եւ Գլուխ առաքելոց· Հարցուր թէ ինչ- պէս, — գրեթէ այսպիսի տրամաբանու- թեամբ. «Քրիստոս ասաց Պետրոսի, դու «ես վէմ· Պօղոս առաքեալը կասէ, վէմ «էր ինքն Քրիստոս· ապա ուրեմն Պետրոս «Քրիստոս է, եւ Քրիստոս Պետրոս, ո- «րովհետեւ երկուքն եւս վէմ կասուին. «Իսկ արդ Պապը յաջորդ է Պետրոսի, «եւ նորա ամեն իշխանութիւններն ու «յատկութիւններն ունի, ուրեմն Պա- «պըն եւս է վէմ, Պապն եւս է Պետրոս, «Պապն եւս է Քրիստոս: Իսկ արդ Քրիս-

«սոս թագաւոր է թագաւորաց եւ տէր «տէրանց, այլ ուրեմն նաեւ Պապն է «թագաւոր թագաւորաց եւ ինքնակալ «ինքնակալաց: Քրիստոս է Աստուած, «եւ հարկաւ անսխալական, այլ ուրեմն «Պապն եւս է գրեթէ աստուած (quasi «Deus !!!) ուստի եւ կհարկէ անսխալ. թող «ինչ կամին ասեն տիեզերեկան ժողով-«ները եւ ամենայն աշխարհ»: Մեր երանելի Կաթուղիկոսին գովելի հեռատեսութիւնը մինչեւ այն կէտին չհասաւ որ գուշակէր՝ թէ միայն Նիկոլին անգամ Պապին անունը յիշատակելու հրաման տալը ամենամեծ վտանգի պատճառ էր, պէտք չէր որ հրաման տար նորա այդ բանին: Կասէ Առաքել պատմիչը՝ թէ «Վասն յիշելոյ զանուն «Փափին՝ Նիկոլն ինքն խնդրեաց ի Կա«թուղիկոսէն՝ զի այնմ միայն ներումն «արասցէ: Քանզի Նիկոլն ասաց՝ թէ «Ձեռնագիրն զոր ես տուեալ եմ Փռանկաց՝ «ի կարգէ լուծանեն զիս, գուցէ մա«հապարտ եւս առնիցեն. վասն այնո«րիկ ներեաց Կաթուղիկոսն»: Եւ մեք հարկադրեալ եմք ասելու՝ թէ շատ աւելի լաւ կանէր՝ եթէ չներէր ամենեւին, այլ ասէր Նիկոլին. «Որովհետեւ դու «ընդդէմ քու հաւատարմութեանդ առ «եկեղեցիս Հայաստանեայց եւ առ Ա«թոռն սրբոյ Էջմիածնի՝ այնպիսի ա«պօրինաւոր եւ անվաւեր ձեռնագիր «տուել ես Փռանգաց, արժան եւ իրաւ «է որ կամ այն ձեռնագիրն ետ առ«նուս եւ այնպէս յառաջ տանիս քու «առաջնորդութիւնդ, եւ կամ ես իբ«րեւ Կաթուղիկոս՝ լուծանեմ դքեզ ե«պիսկոպոսական աստիճանէդ»: Իսկ այն խօսքը թէ գուցէ մահապարտ եւս առնիցեն զիս Փռանկքն, ո՞չ ապաքէն սուտ էր եւ սնոտի երկիւղ. այլ թէ ոչ, այս ինքն եթէ ճշմարիտ լինէր, միթէ այնպիսի անիրաւ իշխանաւորաց պէտք էր ձեռնագիր տար, կամ թէ տուածը օրինաւո՞ր էր:

Ինչ եւ իցէ, Նիկոլ այս չորս կամ հինգ յօդուածները գիր անցուց, իւր կնքովը կնքեց, ձեռնագրովը հաստատեց եւ տուաւ Կաթուղիկոսին, եւ Կաթուղիկոսն յանձնեց Խաչկօ դատաւորին որ Իլվով տանի, գլխաւոր Իլվովցիք թէ ինչ խոստմունք արած է Նիկոլը Փիլիպպոս կաթուղիկոսին, եւ ըստ այնմ վարուին հետը: Յետոյ վերուց բանագրանքը Նիկոլի վերայէն, հաստատեց գրով նորա եպիսկոպոսական եւ առաջնորդական իշխանութիւնը, եւ խրատեց հայրաբար որ ետ կենայ իւր թափառական ու խենէշ վարմունքէն, արդարութեան ճանապարհը դառնայ եւ եպիսկոպոսական անուան ու աստիճանին վայելուչ ընթացք ունենայ: «Եւ նա հոգւով չափ եւ յօժար կամօք յանձին կալեալ զամենայն հրամանս կաթուղիկոսին», ինչպէս կասէ պատմագիրը, դարձաւ Իլվով:

Իլվովի ժողովուրդը լաւ գիտնալով Նիկոլի ազգատեաց ու խռովասէր հոգին, ամենեւին չէր կարծէր որ Նիկոլ այն պայմանները յանձն առնու, կամ պաշտօնին մէջ հաստատ մնայ. կյուսար թէ նորա տեղը կաթուղիկոսէն նոր առաջնորդ պիտի որոշուի իրենց, եւ պիտի ազատին այն անգութ եւ անողորմ բռնաւորին ձեռքէն. Բայց խաբուեցան.

չմոռցեցին որ Նիկոլի նման անխիղճ եւ անամօթ բռնակալները երբ մեղքերն կղնեն եւ ուրիշներուն այնպէս կհասկացնեն՝ թէ իւրեանց արածն աստուածահաճոյ գործ է, սուտ խօսիլն եւ սուտ երդում անելն անգամ օրինաւոր կհամարին, միայն թէ իւրեանց նպատակին հասնին։

Գիտէր նաեւ Նիկոլ՝ որ եթէ այն պայմաններն պահէ, պապին ու եզուիթներուն աչքէն պիտի ելնէ. բայց որովհետեւ պահելու ամենեւին միտք չունէր, նայեցաւ որ ժողովրդեան աչքը խաբէ, նորա սանձը ձեռք ձգէ, այնուհետեւ ուզածին պէս խաղայ հետերն*)։

ԺԳ.

Նիկոլ եւ Խաչկօ Իվան որ դարձան, քաղաքացիք պատմել տուին Խաչկօյին ամեն բան, Նիկոլի գրաւոր խոստմունքն եւս տեսան, բայց ամենեւին չհաւատացին՝ թէ Նիկոլ այդ խոստմունքը պիտի կատարէ։ Քանի որ կյիշէին նորա այնքան եկեղեցական հարստութիւնք յափշտակելն ու փճացնելը, եւ իւրեանց տուած անտանելի նեղութիւնները, «Այրեալ խորովեալ տոչորէին սիրտք «նոցա, կասէ Առաքել, վասն այնորիկ «ոչ կամէին միաբանել ընդ նմա, նա «եւս առաւել փախչէին, եւ կամէին «նզով լինել ի նմանէ». մանաւանդ որ թէպէտ խիկղեան կարծեցին թէ նա զղջումի եկած ու անպիտան վարմունքը թողած է, բայց շուտով տեսան որ մի եւ նոյն վարքը բռնած կերթայ անփոփոխ։ Ուստի ոչ միայն հետը չեմք միաբանիր կասէին, հապա երեսն անգամ չեմք ուզեր տեսնել։

Տէր Զաքարիա անունով աւագերեց մի ունէին՝ որ Նիկոլին հետ լաւ էր, նա եւս շատ յորդորեց ժողովուրդը որ վերցնեն իւրեանց մէջէն այն խռովութիւնը, ճար չեղաւ։

Վերջապէս Փիլիպպոս Կաթուղիկոս յուղարկած էր Արղնցի Յովհաննէս վարդապետը, որ իւր աշակերտներէն մէկն էր, իմաստուն ու խաղաղասէր մարդ, որպէս զի զժողովուրդ հանդարտեցընէ։ Իլովցիք առաջ նորա խօսքերուն եւս մտիկ չարին՝ ասելով թէ «Նիկոլին «ինչ մարդ լինելը չես գիտեր, հայր «սուրբ, ու Սրբազան Կաթուղիկոսին «պէս դուն եւս կխաբուիս. բայց մեք «լաւ ճանաչեցած եմք նորա կեղծաւո«րութիւնն ու անզգամութիւնը, չեմք «ուզեր յայտնապէս խաբուիլ»։ Սակայն բարեխօս վարդապետը այնչափ աշխատեցաւ, այնչափ խրատներ՝ յորդորանքներ արաւ որ ժողովրդեան բարկութիւնը իջեցուց, բերաններէն խօսք առաւ որ հաշտուին Նիկոլի հետ։

Հետը առաւ զամենքը, Նիկոլ եպիսկոպոսն եւս ի միասին, եկեղեցւոյն դուռը տարաւ բազմութեամբ, դրանը առջեւ աղօթք անելէն յետոյ՝ դարձաւ օրհնեց ժողովուրդը Սրբազան Կաթուղիկոսին կողմանէ, Նիկոլին աջը համբուրեց, եկեղեցւոյն բանալիքն որ մինչեւ այն վայրկեանը իւր քովն էին՝ նա-

(*) Հարկ կհամարինք ամբողջ դնել այս նշանաւոր անցքին պատմութիւնը՝ ինչ խօսքերով որ Առաքել վարդապետը կյիշատակէ։

րա ձեռքը տուաւ որ լինքը բանայ, եւ նա բացաւ ու մտաւ ներս։ Նորա եւտեւէն խեղճ ժողովուրդը ոչխարներուն իւրեանց փարախը հորդան տալուն նըման վաղեց ներս թափեցաւ, ու սկսան ողբողորմ արտասունքով եւ բարձրաձայն աղաղակով լալ ողբալ՝ որ քսան ու երեք տարի իւրեանց եկեղեցիէն զըրկուած մնալէն յետոյ՝ վերջապէս արժանի եղան մէջը մտնելու։ Գետինը համբուրելու ժամանակ՝ երեսներն քարերուն կքըսէին ու տաք տաք արտասունքով իւրեանց այն տեղը թաղուած նախահարց տապանաքարերը կըթրջէին. աչքերն վեր վերցնելով՝ խորաններուն խնկահոտ պատկերացը նայած ժամանակները՝ սրտերուն հալը արտասունքներուն աղբերանալէն եւ սրեկէզ հառաչանքներէն կհասկացուէր։ Ո՞վ կը մտածէր այն միջոցին՝ թէ այնպիսի անհնարին աղետից պատճառ՝ փառամոլ եպիսկոպոսի մի բռնութիւններն ու անզգամ եզուիթներու կեղծաւորութիւններն էին . . . ամեն մարդ այս միայն կմտածէր որ իւր հայրը կամ մայրը, հօրեղբայրը կամ մօրաքոյրը, եղբայրը կամ զաւակները, այն քսան ու երեք տարուան միջոցին վախճանելով՝ նոյն եկեղեցւոյն կարօտովը հալած աչքերն գոցեր էին. այս միայն կմտածէին որ վերջապէս ողորմեցաւ իրենց Աստուած հարցն իւրեանց, եւ ազգութիւննին կորսընելու վտանգէն ազատեց։ Չէին գիտեր խեղճերն որ օր պիտի գար՝ յորում նոյն եկեղեցւոյն մէջ իւրեանց թոռներն ու թոռանց թոռները օտար լեզուով, օտար դաւանանքով, օտար ծէսով, օտար հագուստով, օտար հոգւով՝ պիտի աղօթէին (ինչպէս այժմ), եւ իւրեանց կրած տառապանքը՝ եւ ոչ մտքերն ձգող մի պիտի գտնուէր։

Վերջապէս Յովհաննէս վարդապետն եւս նոցա հետ ի միասին երկար ժամանակ լալէն ողբալէն յետոյ՝ հանդարտեցուց ժողովուրդը, ելաւ բեմին վերայ, եւ մխիթարական սրտաշարժ քարոզ մի տուաւ։ Յետոյ գնաց Նիկոլին առաջը, խնդրեց որ օրհնէ ժողովուրդը. եւ նա ելաւ խաչով աւետարանով օրհնութիւն տուաւ, խնդրեց որ մոռանան մինչեւ այն ժամանակ իւրեանց մէջ անցած բաները։

Մխիթարուեցաւ բարեսիրտ եւ անյիշաչար ժողովուրդը, գնացին ամենքը մի առ մի Նիկոլին աջը համբուրեցին, նորէն նորէն օրհնութիւնն առին, եւ փառք տալով Աստուծոյ՝ դարձան իւրեանց տեղերն։

Այս բաներուս լուրը քաղաքին մէջ որ տարածուեցաւ՝ ամենուն առ հասարակ մեծ ուրախութիւն եղաւ, մինչեւ հրեաներն անգամ ուրախակից կլինէին Հայոց, ասելով նոցա անշուշտ՝ թէ իւրեանց նախնեայց Բաբելոնի գերութենէն դարձած ժամանակին ուրախութիւնը կվայելեն։ Նաեւ ուրիշ քաղաքներէ, մինչեւ Կոստանդնուպօլսէն անգամ ուրախակցութեան թղթեր եկան Խլվովին, եւ աստիս անդին ցրուած քաղաքացիներէն ոմանք նորէն դարձան ու բնակեցան Խլվովի մէջ։

Յովհաննէս Փաղիմիր Լեհաց թագաւորը լսելով այս բաներս՝ զարմացաւ,

կանչեց Յովհաննէս վարդապետն ու քաղցրութեամբ խօսեցաւ հետը, գովեց նորա խաղաղասիրութիւնը, շնորհակալ եղաւ նորա ու պարգեւներ տուաւ։ Իսկ նա տարի մի Իլվով մնալէն յետոյ դարձաւ եկաւ Էջմիածին։

ԺԳ.

Նիկոլ յոյսը կտրեց այնուհետեւ այն ժամանակի ժողովուրդը կաթոլիկ անելէն, եւ համդարտութեամբ տրաւ առաջնորդութիւնը քանի մի տարի, ինչպէս կվկայէ նաեւ ժամանակակից եւ անկողմնասէր պատմիչն մեր. վասն զի այսպէս կվերջացնէ նա Նիկոլին պատմութիւնը. «Իսկ ժողովուրդքն Լօ-«վայ եւ Նիկոլ եպիսկոպոսն կան ի վե-«րայ նոյն պայմանադրութեանն զոր «սահմանեցին Փիլիպպոս Կաթուղիկոսն «եւ Յօհան վարդապետն մինչեւ ցայսօր, «յորում զպատմութիւնս շարադրեցաք, «ի թուականիս մերում հազար եւ հա-«րիւր եւ ինն (1660) ի Մայիս ամսոյ «տասն»։

Բայց Նիկոլի միտքը այն էր որ աչքերը չփակած՝ այնպիսի ճանապարհի մէջ դնէ ժողովրդեան ընթացքն՝ որ գէթ նոցա որդիքը իւրեանց ազգութիւնն ուրանան մոռանան, եւ ինքը իւր վախճանին հասնի։ Գիր գրեց Հռոմ՝ Աղէքսանդր Է Պապին, եւ խնդրեց որ Իլվովի մէջ Հռովմայ ծախքովը դպրոց բացուի Հայոց։ Յայտնի բան էր թէ Պապին փողովը կանգնուած դպրոցի վարժապետներն ու աշակերտները Լուսաւորչական չէին կարող մնալ, հարկ էր որ դաւանոյն. ուստի զարմանք չէ որ Պապը ամենայն սիրով հաւանեցաւ Նիկոլի խնդրոյն, եւ իւր հրամանովն ու ծախքովը տասուերկու ձրիավարժ աշակերտաց համար դպրոց մի կանգնուեցաւ այն տեղ 1664 ին, Կղեմէս Գալանոս լատին կրօնաւորն նորա մէջ դասատու դրուեցաւ։ Այս այն անուանի Գալանոսն է որ մեր ազգը տակնուվրայ անող դաւանագրեաս գայլերուն մէկը ճանաչուած էր նաեւ այն ժամանակ, ու Պօլսոյ ժողովրդեան մէջ մեծամեծ կռիւներ ձգելու համար՝ պատրիարքական հրամանաւ քշուած էր անկից ու Հռովմ կրկեւնար՝ իբրեւ փրոփականտայի վարժապետ. յայտնի էր թէ Նիկոլի դպրոցին մէջ պապականութիւն սովրեցընելու որչափ յարմար էր։ Գալանոս երկու տարիէն մեռաւ, եւ նորա յաջորդեց նոյն դպրատան մէջ (որ իրաւամբ կրնար ասուիլ Հակա-լուսաւորչականութեան) Վարդան Յուհանանեան ազգուրաց եւ լեզուակորոյս քահանան՝ փրոփականտային ու Նիկոլի սիրելի աշակերտը։

Նիկոլ այս կերպով ազգասպան կենօք ապրեցաւ շատ տարի, մինչեւ որ 1681 ին վախճանեցաւ. տեղը անցաւ Յովհաննէս Քարմատանեանց, որ երեք տարի միայն արաւ առաջնորդութիւնը, եւ նորա յաջորդեց վերոյիշեալ Վարդան Յունանեանը։ Նա իւր նախորդներին ոչ տուած խոստմանցը եւ ոչ տուած երդմանցը նայեցաւ, այլ բոլորովին բաժանեց Իլվովի ժողովուրդը Էջմիածնայ Կաթուղիկոսին հաղորդակցութենէն ու պապական դարձուց, ազգային եկեղե-

ցական կարգերը փոխեց փոփոխեց՝ բոլորովին լատինացուց, եւ Հռովմայ Հաճութիւնը վեր դնելով իւր խղճմտանքին տանջանքէն ու Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ նախնի վարդապետներուն բողոքմանէն, ազգիս այն գեղեցիկ ու պատուական մասը առաւ խառնեց օտար ազգաց մէջ ու կորսնցուց։ Կորսնցուց կասեմ՝ վասն զի այսօրուան օրս ազգասէր Հայ մի այն կողմերն որ երթայ, եթէ լեհերէն, գերմաներէն կամ լատիներէն չգիտեր, եւ ոչ իսկ կարող կլինի այժմու Հայերուն հետ խօսիլ ու իմանալ ի նոցանէ իւրեանց նախնեաց լեզուովը՝ թէ Հայոց թաղն ու եկեղեցին Իլվովի ո՞ր կողմն է . . . : Կմնայ այն եկեղեցին որ իւր նախնեաց հաւատովը՝ յուսովը՝ սիրովն ու բարեգործութեամբն հիմնուած ու նոցա ազգային փառք արարողութիւններովն ու սրտաբուխ երգերովը պայծառացած էր երբեմն, կտեսնէ մէջը լատինացիներու քահանաներ որ լատին եղանակով լատին հնչմամբ Հայերէն լեզուով ժամերգութիւն կընկատարեն, առանց սարկաւագի անձայն եւ աններուք պատարագ կմատուցանեն . . : կըշուարի, կտագնապի, կզարմանայ, որտում տըխուր իւր տեղը դառնալու կփութայ, գրեթէ վախենալով որ մի գուցէ ինքն եւս յանկարծ նոյն խեղճութեան մէջ ընկնի։

Այս դժբաղդ վիճակիս մէջ են ահա Իլվովի եւ բոլոր Լեհաստանի Հայերը, ազնիւ որդիք այն Բագրատունեաց այրեցեալ մայրաքաղաքին՝ որ կարծես թէ հիմնայատակ ու գետնամթաց Հայկաշէնէն, Արտաշատէն, Դուինէն, Երուանդաշատէն, Արմաւիրէն աւելի թըշուառ կամ աւելի երջանիկ բաղդով՝ կիսաւեր ու կիսականգուն մնացած է, որպէս զի Ախուրեանին ողբաձայն խոխոջանքը միայն լսէ՝ բուերուն ու չըղջիկներուն տխուր ձայներուն հետ։

Եւ այսքան թշուառութեան մի միայն պատճառ՝ Նիկոլ եպիսկոպոսին փառամոլութիւնն եւ ազգադաւ լատինամոլութիւնը։

Գ. Ա. Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ·

Գ· Ղ· ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ·

1842 ԹՒԻ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ·

ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ·

(Շարունակութիւն)

Շահի մօրուքը կար էս տեղրանքի քանի մի անհնազանդներին զսպելուց յետոյ չուեց գնալ Նորպատական: Սարդարը շատ բողոքներ էր գրած Պարաքաղու և Վրաստանու տիրապետողներէն և եղակացուցած թէ, սոքա վատ օրինակ են այլոց տիրապետողաց, չհնազանդելով քո դրօշակին գրգռում են ուրիշներին չհահել : Ի հարկէ են եւ հետեւելով Սարդարի խորհուրդին, պարտաւոր էի գրգռել Շահի փառասիրութիւնը, մանաւանդ որ գործի մէջին եղած էր, որպէս պատմած

եմ։ Ամիս ու կէս մնալով Նասրահան,
յետոյ ուղարկեց երկու անգամ զօրքով,
գնամ շրջակայ ապստամբներին պատժեմ։
Երկու անգամն էլ կատարեցի ինձ յանձնած
ծառայութիւնը ճշտութեամբ։ Նրանց ճշ-
տութեամբ, այն ինքն արիւնհեղութիւնը,
աչք հանել տալը, մարդ խեղդել տալը,
միանգամայն ասած, սպանել տալը ինչ
պատժով որ լինէր, որպէս ամէնայն օր
անպակաս էր պալատումը, նոյնպէս ամե-
նայն տեղակալները և հրամանատարները,
որոնք ցրվում էին էս կողմն էն կողմն՝ նը-
րա անդառնալի հրամանները կատարելոյ,
պարտաւոր էին հետեւիլ նրա օրինակին։
Ահա էստունը էր ճշտութիւնը որ ասեցի։
Պարսկաստանը մին սպանդանոց էր եղած։
Որքան շատ մարդ սպանել և պատժել
տային, էնքան աւելի կյառաջանային
նոր Շահի մօտը։

Յանկարծ Թէհրանու կողմից ապըս-
տամբութեան ձայներ լսելով, հրամայեց
Շահը զօրացը չուել նախ Թէհրան և էն
տեղաց Քիրման գնալ։ Կարծում էի թէ
ու էս մեզ նման ծանր հանդարտ կերթայ
բանակովը, բայց էնպէս կրակոտ և անհան-
գարտ բնութեան տէր էր, որ զարմացանք,
ինչպէս տասն օրումը հասցրեց մեզ Թէհ-
րան։ Որպէս թէ վռազում էր գնայ իւր
աչքովը տեսնէ Նադր Շահի և Քեարիմ
խան Զանդի ոսկորները, որոնք հանել
տուել էր ու ուղարկել Թէհրան իւր ար-
քունեաց մէջը մեծ դռան շեմի տակին թա-
ղեն, որպէս զի ամէնայն օր տուն ու դուրս
անելիս՝ կոխրտէ ու անց կենայ, և էստով
իւր գազանային նախանձը հովացնէ։

Բախտիարցիք և Լօռերը ի բնէ վայրագ
և յափշտակող լինելով՝ սովոր էին միշտ
նշկահել թագաւորաց լուծը, թէև անընդ-
հատ, որպէս ասած եմ, իւրեանց վտա-
րանջութեան պատիժն էլ կրել էին։ Էս
անգամը Շահի երկու հարիւր ձիաւորով
վերադառնալը Շիրազէն՝ պատճառ էր
տուած նրանց ստածել և հաւատալ որ
Շահը Շիրազումը խորտակուած փա-
խըստեամբ վերադարձած եկած է Նասրա-
հան, ուր և պաշարված է իւր թշնամինե-
րէն։ Ուստի և դումարված էին քանի մի
հազար հեծելազօրներ և հետեւակներ —
որք ինչպէս ձիաւորներ շուտափոյթ կքայ-
լեն համարեա — եկած պաշարած էին Թէհ-
րանը և չորս կողմը ասպատակած։ Շահն
էլ, որպէս ասել եմ, Թէհրանը և նորա
չորս կողմը իւրեանն շալլիկ կհամարէր, ըստ
որում հայրենեացը՝ Մազանդարանին, աղ-
գականացը և իւր ժողովրդեանը մերձ էր
և յարմար մայրաքաղաք լինելոյ որպէս
կեդրոն Պարսկաստանի, աշխատում էր
միշտ Թէհրանը անվտանգ պահպանել։
Շահի բանակի Թէհրանին մերձենալը
Լօռեր լսելով՝ երեք օր յառաջ էին հե-
ռացած էն տեղաց։ Շահն էլ չկարողա-
նալով ժուժել նոցա յանդգնութեանը,
արշարադաս վրէժ հրատարակել տուաւ
հոգևորականաց բերանովն, այս ինքն
Բախտիարցւոց և Լօռերին պատժողի
վարձքը երկնքումը պատրաստ է։ Երեք
բիւր զօրաց բանակաւ յարձակուեցաւ
նոցա վերայ։ Մալայիր և Քիրմանշահ
ոտի տակը յաւեր և ապականութիւն
դարձրեց, թէ ինչի՞ էք թող տալիս նոցա
ձեր հողովը գան անցնեն։ Էս ձէնը ինչպէս
կայծակ մեղանից յառաջ գնալով մեր ճա-
նապարհի վերայ կացող ժողովրդի մէջը,
շատերը գաղթուած ցրուած էին, վանն ա-

րոյ և զօրքն թէև ուտելեաց մասին շատ դժուարութիւններ կրեցին, այսու ամենայնիւ Շահը չկասեցաւ իւր խորհրդէն՝ վերադառնալ Թէհրան: Քսան և վեցերորդ օրը մտինք Լօռըստանի լերանց մէջը, մինչ մին առաւօտ վերկացանք տեսանք երկու երկար ու բաւականին լէն ձորի մէջը — ուր ջրի և խոտի համար էինք բանակուած — շրջապատուած ենք անթիւ հետևակ և հեծելազօր Լօռերէ և Բախտիարներէ: Շահի անզգուշութիւնը էսպէս տեղում բանակվելոյ համար էր մեր էնքան օր թափառելն և երբէք բնակիչ չտեսնելը, որոյ աղագաւ միամիտ էր թէ դեռ ևս նրանք մեզանէ շատ հեռի են: Թէ թշնամեաց յախուռն և անխորհուրդ մեզ վերայ յարձակումը — որ սովորական է նրանց — չէր եղած, շատ լաւ էին փակած մեզ երկու լերանց մէջը, և կապած մեր ճանապարհի պաշարն էլ, թէև առանց էնդուրն էլ պակաս էին մեզ, ու թէ երկու օր ևս էնպէս պաշարած սպասէին առանց շարժելոյ իւրեանց տեղէն, սովալլուկ կոտորվելոց էինք:

Զիմացանք ի՞նչ պատճառաւ, ի՞նչ դիտաւորութեամբ, մինչ մեք մեր մէջը պատրաստվում էինք ըռելեայն, Շահին խնդրենք՝ թէ կարելի լինի՝ ինքն փախչի մին կերպով, և մեք զինաթափ լինինք, յանկարծ անխոհեմ թշնամիքը ընդդէմ մեր ակնկալութեան, մին առաւօտ խառն ի խուռն մեզ վերայ յարձակուեցան, էն էլ ոչ թէ սարերի գլխիցը, որ շատ յարմար էր նրանց, այլ ձորի երկու կողմէն, որ մեք իւրաքանչիւր կողմումը երկու երկու հազար պահապան կամ յառաջապահ զօրք ունէինք: Շահին և բոլոր զօրացը հաւաստի էր, որ եթէ մեք աշխատենք դուրս գանք ձորի միջէն, որոյ հեռաւորութիւնը մին փարսախ կարելի էր ընէր, որ կողմիցը որ լինի, ընկնէինք լէն հրապարակի նըման դաշտի մէջը, ամենևին կազատուէինք, ըստ որում մեք թնդանօթներ ունէինք, նրանք ոչ: Արդարև էնպէս էլ եղաւ և մեր ակնկալութիւնը պսակուեցաւ: Շահը՝ որ գիտէր ամենայն անակնկալ թշնամւոյ սխալանքն՝ աշխատել, աճապարել շուտով իւր օգտի համար ի գործ դնել, էն ժամին էլ կատարեց: Մին էլ սաստիկ պատերազմի ժամանակը, թշնամեաց խումբը, որ մեր ձախակողմեան կրճի առաջապահ զօրաց հետը տաք տաք կռւում էր, և մեր կողմիցը շուտ շուտ նոցա օգնութիւն էր հասնում, թողեցին մին կողմի կիրճը քանի մի զօրականաց յուսով և բարձրացան բռնութեամբ լերանց ստորոտների և կողքերի վերայ, էն տեղաց մեզ հետ պատերազմէն, որն որ առաջ պէտք էին անելոյ, կիրճերը լաւ զօրքով ամրացնելուց յետը: Շահը իւր զօրաց մեծ զօրութիւնը էն կողմը դարձրեց, ուր նոքա դատարկեցին և շատ չտևեց, կարողացաւ մին քանի վաշտ հեծելազօր և հետևակ երկու թնդանօթով ձեղքել թշնամեաց պատնէշներն և անզօր զօրքն ու անցուցանել ընդարձակ դաշտը: Շահը խրախուսում էր, քաջալերում էր իւրայնոցը չըթողուլ կտրվի անցանողաց շղթայն: Շատ չքաշեց զօրաց մի մասն, ինքն ևս նոցա մէջը խառնված, անցկացաւ դաշտն:

Էս շղթայն կտրելոյ և չկտրելոյ ժամանակը մեր և թշնամեաց մէջը սաստիկ կըռիւ եղաւ: Մեք գիտէինք և միմեանց ձայն էինք տալիս, մեր ճակատագիրն էն

շղթայի վերայ է կայացած: Երկու ժամեն, կարելի է ասել և աւելի քաշեց, մեք աշխատում էինք միանալ մեր դաշտը դուրս գնացած զօրաց հետը, և նրանք բարձր տեղից մեզ արգելք էին լինում: Մինչ այս մինչ այն՝ նրանց ձախակողմեան և յետ մնացած զօրքն ևս եկին սոցա օգնութիւն, էնքան անկարգ, որ փոխանակ ձորումը մեր զօրացը վերայ յարձակվելոյ և մեր քամակիցը մեզ վերայ ուժ բերելոյ, թողին լքին էն տեղը ազատ, ու սարերի կողքերիցը հասան աջակողմեան կրծի մէջը, որպէս թէ կամ կապեն մեր փախստեան ճանապարհըն, որ տանում էր դէպ ի Քիրման կամ Մալայիր, կամ թէ կասկածել էին, չլինի թէ էն տեղի իւրեանց պատերազմակիցները մեզ յաղթեն ու միայնակ տիրանան աւարին: Ահա ո՛րքան միամիտ էին իւրեանց յաղթութեան վերայ: Երբ երեք թնդանօթ ևս անցկացրինք դաշտի կողմը, այնուհետև թշնամիքը չկարողացան իւրեանց կայի վերայ կանգնել ու մեզ արգելուլ: Թողինք մեր ծանրութիւնը ձորի միջին, միացանք միմեանց հետ ու ուժ բերինք թըշնամեաց վերայ: Դաշտից յարմար էր մեզ բարձրանալ սարի կողքերի վերայ թեթև թնդանօթօք, ուստի և նրանց վերայ սաստիկ կրակ բանալ: Թշնամեաց հետևակը առաջինն եղաւ երես դարձնելոյ դէպ ի սարերի կատարները, որք անմատչելի էին ձիաւորի, վասն որոյ և նոցա հետևակի շունչը յետ բերաւ, այս ինքն ազատուիլ կոտորածից: Իսկ ձիաւորը վեր չէր կարողանում բարձրանալ, և եթէ վայր իջանէր մեր մէջը, սրոյ ճարակ պէտք էր լինի: Ուստի սոցանէ, որոնք ձիանքը թողին, հետևակ փախան՝ ազատուեցան, իսկ մնացեալքն սրոյ ճարակ եղան կամ գերի ընկան:

Կէս օրէն անց էր՝ յաղթութիւնը կատարեալ մեր կողմը վճռվեցաւ, և թշնամեաց ընդդիմութեան սաստերն անգամ չէր երևում: Մեզանէ մերձ երեք հազար հոգի սպանուած և շատ էլ վիրաւորված կային, յորոց մինը ես էի՝ կուրծիցս թրով: Թշնամեաց կորուստը կրկնապատիկ էր: Իսկ յաղթութեանը նայելով, աւարը քիչ էր և գրեթէ ոչինչ, որ մեր զօրացը վհատութեան պատճառ էր: Թշնամիքը բաց ի երիվարներից, որոնցից շատը վիրաւորված էին, և սպանվելոց զրահներից, որք և ոչինչ մեծ արժողութիւն չունէին, ուրիշ աւար չէին թողած, և էն վայրենի և թափառական ժողովրդէն նրանցից աւելի պատերազմում ոչինչ չէին ունենալ:

Սպանվելոց դիակներէն հոտելուցը երկիւղ կրելով՝ բանակի տեղը փոխեց Շահը, հրատարակելով որ տասն օր մնալոց է էն տեղ զօրացը հանգստութիւն տալոյ համար, ուստի և հրամայեց հեծելազօրներին ասպատակ սփռելն չորս կողմի գիւղօրէից վերայ, որք 8, 9, 10 փարսախաչափ հեռի էին մեզանէ, ըստ որում որպէս ասեցի, մօտիկ գիւղերը դատարկուած էին: Երբէք էսպիսի հարուստ աւար էնքան տարումը չէր պատահած Շահի զօրացը ժողովել: Քանի՛ քանի՛ հազար չորքոտանիք ժողովեցին բանակի չորս կողմը: Բանակ չէր, այլ հօտ անդեայ էր: Վերջապէս եօթներորդ օրը թշնամեաց կողմէն քանի մի հոգևորականներ եկին հնազանդութիւն խոստովանելոյ համար և ներողութիւն խնդրելոյ: Շահը ընդունեց նոցա առաջարկութիւնը, պայմանաւ որ տասն ժողովրդա-

պետներէն պատանդ տային և երկու հազար հեծելազօր։ Երկու կողմիցը ընդունուեցան պայմանները, և Շահը վերադարձաւ Թեհրան թեթև զօրքով, որպէս զի բանակը յետոյ գնայ հասնէ նրան Թեհրանում։

Հասայ Թեհրան. տուին ինձ նամակներ Ահմատ խան աներոջիցս, որ գրած էր՝ ինձ արու զաւակ է ծնած։ Վերքիս լաւանալը, Շահի առատ շնորհը և արու զաւակ ծնանելոյ լուրն՝ ինձ երջանկութեան ծայրն էր հասցրած իմ երևակայութեամբը։ Միայն պակաս էր ինձ շուտով վերադառնալ Նորպատական, էնտեղ ցոյց տալ պալատական լինելս և թշնամեաց աւարովը հարստանալս։ Ընդդէմ իմ ակնկալութեան՝ հասաւ Քիրմանու ապստամբութեան լուրն, որոյ մասին Շահն շտապով հրամայեց զօրացն չուել գնալ էնտեղ։ Էն անշիջանելի փառքի և պատուի ծարաւն, որ Շահի սրտումը գոյացած և հիմնաւորված էր, ժամանակ չտուեց նրան սպասելոյ։ Էս մեր ճանապարհորդութիւնը մի և նոյն եղանակաւ անիրաւութեամբ կատարվեց՝ ինչպէս միւսներն որ պատմած եմ։ Շահի Քիրման բանակով հասնելն, կարճ միջոցումն ապստամբներին բռնելը՝ ոմանց կուրացուցանելն, ոմանց սպանել տալն զանազան խոշտանգներով (իսկէնջէ)՝ երևելի պատմաբանի գործ է, և ոչ ծերացած՝ փտած լեզուիս, որոյ և շատն մոռացած է յիշողութիւնս։

Քիրմանումը քանի օր հազիւ ժամանակ տուեց Շահն բանակին հանգստանալ, հրամայեց չուել վերադառնալ Թեհրան և էնտեղաց Նորպատական, ուր մեծամեծ նպատակներ ունէր կատարելոյ։ Մտքումը դրած էր անպատճառ պատժել նախ՝ Ղարաբաղու Իբրահիմ—Խալիլ կամ Իբրահիմ խան տիրապետողին, որ ընդդէմ Սարդարի կամացը ասպնջական էր եղած Մամատ Սադղ-Խան Շաղաղուոյն, որոյ այն երկրորդ անգամն էր նշկահելն, և երկրորդ՝ Վրաստանու Հերակլ վալիին որ երբէք չէր ճանաչում իւր հեղինակութիւնը։ Թէև ասում էր նա՝ գնումեմ նոցա վրայ, բայց մեք չէինք հաւատում, ըստ որում ինչպէս մեք գիտէինք, նոյնպէս և Շահն և՛ս լաւ զգում էր, որքան դժուար էր էս պատերազմն, որովհետև շատ անգամ Պարսկաստանի զօրաց գերեզման է եղած Վրաստանու կողմերքի հողն։

Վերադարձանք Թեհրան, էնտեղ երկար ժամանակ չմնալով, շարունակեցինք ճանապարհներնիս դէպ ի Ղազուին։ Մին օրվան ճանապարհ մնացած Ղազվինայ բարձրագոյն ատենումը՝ ասաւ Շահն՝ Նազրուբ խան, Աստուծով քեզ Ղազվինու քաղաքապետ եմ նշանակելոց։ Զգիտէի թէ նրա բառգրքումը ոչ բառն չկայ։ Ամենայն մեծամեծք, որք արձանացած կանգնած էին վրանի առջևն, զարմացած՝ ափշած՝ ընդարմացած մնացին, մինչ ես երկիր պագի և պատասխանեցի Շահին, չէ, ոտիցդ հողը մոխիրը աւելի շնորհապարտ կլինի աշխարհի ազօթարանէն (ղըլէի ալամէն) եթէ սուրհանդակի պէս ուղարկէր իւր գերւոյն՝ Նորպատական էն երևելի յաղթութեան լուրերն տանէ, և Նորպատական շնորհ տանելով համբաւ հաղորդէ էն տեղու մեծամեծաց։

Շահն էս իմ յանդգնութեան վրայ իւրեան բնական զարհուրելի դիմօք աչքե-

րը չըռած ինձ կիսատ միստ նայեց ու գըլուխն քաշ ձգեց։ Փոքր ինչ լռելուց յետը՝ գլուխը բարձրացրեց նոյն ժամտութեամբ ու ուրիշ առարկայի վրայ սկսեց խօսալը։ Մինչ պալատականք պատասխանում էին, կիսատ թողեց նոցա խօսելը՝ վերկացաւ ու ներս գնաց միւս վրանը։ Հենց ատեանը արձակուեցաւ, ամէն պալատականները շատ մեղադրեցին ինձ ու զգացրին որ ոչ բառն անշուշտ շատ թանգ է արժեցող էն օրն կամ ինձ կամ միւսներին։ Ճշմարիտ որ էնպէս եւս էլաւ։ Կէս ժամ անցաւ չանցաւ, ներսից հրաման դուրս եկաւ, քիմաչափ յանցաւորներէն՝ որք կալանաւոր էին՝ բերէին իւր վրանի առաջեւն խեղդեն կամ գլխատեն կամ աչքերնին հանեն, կամ ձեռն ոտք կտրեն։ Ով կարող էր համարձակուիլ բարեխօս լինել՝ երբ բարկացած էր նա։ Կամ՞ էր եկած նըրան՝ որ յանդգնէր մինը հաճոյմամբ կամ թախանձանօք խոչընդոտն լինիլ նրա գիտաւորութեանցը և հրամանին՝ որքան և անիրաւ լինէին։ Սրա աթոռ նստելը արիւնով սկսեց և արիւնով վերջացաւ։ Պարսկական զօրքը ահարկու և սարսեցուցիչ վերակացու էին էն ժամանակները բոլոր Ասիոյն։ Նրանք բաղկանում էին փորձուած հեծելազօրից և հետեւակից, որք կրթուած էին զինուորական արհեստի մէջը. նախ երեւելի Նադրի և յետոյ Քեարիմ Խան Զանդի՝ և հիմի սոյն Աղայ Մամադ խանի կամ Շահի ձեռքումը, որք փառաւորագոյնքն էին իւրեանց ժամանակի պատերազմողաց մէջը։ Ուստի և սա այնքան զօրացած էր, որ իւր գրած հրովարտակները որ տեղաց և ում կամ ում վերայ և ընէր, ներգործական օրէնք և անհակառակելի կանոն պէտք էին համարվիլ, ապա թէ ոչ՝ հրով՝ սրով կըդատուէին արդարըն և յանցաւորն, հակառակողն կամ ընդունողը՝ անզանազանաբար։

Ինչ և լցէ, ես երկիւղէս էն օրը վրանէս ոտս դուրս չըդրի։ Միւս օրը եկինք Ղազվին, որոյ բնակիչները և երեւելիները ընդառաջ ելին մեծ պատւով ընդունեցին Շահին և բանակին։ Քանի օր որ կացաւ Շահն էնտեղ, նրա աչքումը չերևեցայ։ Զգում էի՝ մեծամեծները և պալատականներն ինչ վշտի և անցկութեան մէջ են եղած նորա մօտը։ Ոչինչայի՞ն էն շնորհները և քաղցր խօսքերը՝ որ մինչև ցայսօր լսած էի ես նրանից և միամտացած՝ թէ լաւ ճանաչեցի նրա բնութիւնը։ Այնուհետև էսպէս ահաբեկած և զարհուրած էի նրա երեսէն, մինչև իւրաքանչիւր ներկայանալս մահս բերանս կգար։ Երբ ատենից դուրս կելթայի, մինչև միւս ատենի ժամանակը մեծ ուրախութիւն էր ինձ համար. հէնց ներկայանալոյս ժամանակըն մօտենար՝ էլի կսկսէի սրտմիլ, կերպարանքս կը փոխուէր և ամէնայն զգայարանքըս կդողար, ոչ ուտիլ՝ ոչ խմել կըգար միտքս, որպէս թէ կիսակենդան և վհատուած ոմն էի։ Մինչև էն օրերը գիշեր ցերեկ, ժամանակ առ ժամանակ ինձ կուզէր մօտը, գործքեր կյանձնէր, այնուհետև որպէս աչքից ընկած միւս զօրավարները և երեւելիքը՝ ատենի օրը միայն կյայտնուէի նրա առաջեւն։ Թէ ես, որ ծառայութիւններս դեռ եւս թարմ էին նրա մտքումը, հիմի մին ոչ բառ արտաբերելոյս համար էնպէս դատապարտուեցայ, անարգուեցայ, ուրեմն նրանք՝ որք ապստամբված էին մին քանի անգամ, ժողովրդապետք և սիրա-

պետողք էին և միշտ կասկածանաց տակն, արգելօք, մտածումէի, ի՞նչ ողորմելի վիճակի մէջ էին:

Շատ ուշ զգացի՝ որ ինչ ժամանակ ինձ մին քամբախտութիւն կպատահէր, կզիմէի ջերմեռանդութեամբ դէպ ի քրիստոնէութեան հաւատը, նրա յոյսը ինձ կըսփոփէր և կը քաջալերէր ընդդէմ տարաբախտութեանս: Տես որդեակ, տես, մահկանացուիս դառը կեանքը, որոյ վիշտն, նեղութիւնը, անպատուութիւնը և երկիւղն որքան ներգործութիւններ ունին նրա սրտի վրայ: Ամենայն ինչ վեր ի վայր են:

Կամենում էի ասել՝ որ էլի սկսեց քրիստոնէութեան կրակը արծարծուիլ սրտումս: Այս պատահարի վրայ խղճմտանքս անհանդարտ էր, և շատ անգամ գիշերները քունս կըկտրվէր, կմտածէի մինչև լուսանալն: Ինչի՞, ինչի՞ վերայ, ես ինքս էլ չէի իմանալ: Յերեխայութեանս լսած էի, քանի՛ քանի՛ իշխաններ, զօրավարներ և զօրապետներ նահատակուած էին Քրիստոսի սիրոյ համար՝ ուրանալով աշխարհիս փառքը, մեծութիւնը, իշխանութիւնը և հարստութիւնը: Կմտածէի, մի՞թէ ես նոցանէ մեծ ոմն եմ, — քաւ լիցի: Երբեմն գլխումս կըպտտտէր ինչի՞ եմ վախենում յայտնի պաշտել ճշմարիտ հաւատս, և ինչի՞ եմ փչացնում կեանքս սընոտի փառաց համար: Ասենք թէ իմացան և հրամայեցին ինձ գլխատել, խեղդել: Մին օր ծնած եմ և մին օր էլ պէտք է մեռնեմ, տասն օր յառաջ տասն օր յետոյ. ի՞նչ զանազանութիւն պատերազմումը կամ կախաղանի վրայ կամ անկողնիս մէջը կամ դահճի առաջին: Ինչի՞ եմ անմտութեամբ կեանքս մաշում. լաւ չէ՞ արդեօք, աղքատ, տկլոր, քաղցած, ծարաւ մնալով, հանդարտ՝ մաքուր խղճմտանք ունենալ, քան թէ սպիտակ փառք ու մեռած՝ մտատանջ հոգի: Մանաւանդ հաստատուն էլ գիտէի, որ այնուհետև բռնաւորին վրէժ առաջուան նման շնորհք չի պէտք է ունենայ, թէև որքան էլ աշխատեմ ու աւելի աւելի ծառայութիւններ ապացուցանեմ: Միանգամ ասած, իմ երևակայացած երջանկութիւնը, որ ունէի, դժոխացած էր ինձ համար: Զունէի առաքինութեանց սկզբունքը՝ որով միայն կզօրանայ ճշմարիտ արին:

Ղազվինու քանի մի օթևան անց էինք կացած, երբ միւս առաւօտը ուրախութեան ձայն հնչեցաւ թէ Շահն վճռեց էն տեղաց ուղղենք մեր չուն դէպ ի Ղարաբաղ և Վրաստան: Աներկմիտ էին ամենքն էս ճանապարհորդութեան օգտի վերայ: Ամենայն բանակն ուրախ էր, բայց ես տըրտում: Ամենքեան գնում էին անհաւատներին — քրիստոնէից — աւար և գերի բերելոյ յուսով, իսկ ես ի՞նչ յուսով: Բաց ի սրանէ. լսէ որդեակ՝ աշխարհիս բախտի յեղափոխութիւններն: Բաց ի սրանէ ասեմ . . . անցեալ տարի էս օթևաններումը չորս հազար պատերազմողաց գլխին կանգնած անխիղճ հրամայում էի հակառակորդաց տունը, տեղը և կայքը յափըշտակել, աւերել, երբէք մտքէս անգամ չէր անցկենում թէ ես քրիստոնեայ եմ ծնած, իսկ էս օր՝ մի և նոյն տեղերումը, յուսահատութիւնէս, և Շահի անշնորհ լինելոյ համար, քրիստոնէութեան սուրբ հաւատին էի ուզում ապաւինել ինձ: Էն օրը թէև անցկացրի, բայց էնքան երկար

երևաց ինձ, որպէս մին ամառվան ամիս: Կէս գիշեր էր՝ զարթուն պարկած կամ նստած մտածում էի, մինչ բոլոր բանակը խոր քնումը կար խրված, ձայն տուի գանձապետ Յովսէփին, որուն հաւատարմութեան համար՝ հրամայած էի իմ վրանիս արտաքոյ սենեակումն քնել: Ողորմելի Յովսէփն դողալով քնաթաթախ կանգնեց առաջիս. կարծելով թէ բարկացած եմ նըրա վրայ կամ նրա կառավարութեան մէջըն մին սխալանք նշմարած եմ, ու հիմի մտաբերած՝ որ ենպէս ընդդէմ սովորութեանս կանչում եմ: Շատ շուտով՝— վախում էի ուրիշ անգամների նման չլինի թէ փօշիմանեմ կամ ամաչեմ ասելն,— քաղցրութեամբ սկսեցի բանալ նրան քրիստոնէութեան վերաբերեալ խորհուրդներս և թէ ուզում եմ ծածկաբար նրանից հետը քրիստոնէութիւնս կատարել: Նա երբէք հաւատ չէր ընծայում ինձ. խա՛ն, ասեց զարմանալով, աւելի լաւ չէ՞ որ իւրաքանչիւրս իւր հաւատի վրայ ամուր մնանք. ինձանէ հաւատարիմ ծառայութիւն պահանջէ՛ և ո՛չ կրօնի զանազանութիւն կամ փոփոխութիւն: Հասկացայ նրա կասկածանքն, վասն որոյ կամեցայ երդմամբ հաւատացնել քրիստոնեայ լինելս: Բայց ի՞նչ երդմամբ, ի՞նչ սրբոց և սրբութեանց անուամբ կարող էի նրան հաւատացնելն: Որքան և երդուեցայ, ամենն անհաստատ և անընդունելի էր նրան:

Ի վերջոյ հարցրի, ունի՞ս սաղմոս՝ աւետարան կամ ժամագիրք. ունիմ պատասխանեց: Գնա բե՛ր նրանցից մինը ինձ մօտ, ասեցի: Երբ գնաց բերաւ, դողդողալով ինձ տուեց, ձեռս առի սկսեցի փոքր ինչ վարժ կարդալ, հիացաւ նա և ափշեցաւ: Էլ այնուհետև հարկաւոր չեղաւ նրան կասկածել: Իմ հրամանաւն դուրս գնաց, Դաւթի հետը վերադարձան, մտան վրանըս, լուռ մունջ ծնրեցին և ձեռքս համբուրեցին: Ես թոյլ չէի տալիս, բայց երբ սկսան յուրախութենէ հեկհեկալով լալով խնդրել, թոյլ տուի, և նոցա երեսն էլ ես համբուրեցի: Ո՜հ, ենպէս քաղցր ժամի և րոպէի էլ չկարողացայ ես հանդիպիլ. ափսո՜ս . . . . . :

Արտաբերեց էս վերջին խօսքերը ալեզարդ միայնակեացը ու սկսեց լալ որպէս մին երեխայ: Ես փոքր ինչ համբերեցի, կարծելով թէ կշարունակէ իւր պատմութիւնը, տեսայ՝ չէ, լռեց և չէ կամենում խօսելը, վասն որոյ և վերկացայ մնաս հա՛յր բարեաւ՝ ասելով դուրս ելլի: Եւ նա ոչ թէ տեղիցը չշարժեցաւ, այլ և գլուխն ևս չբարձրացրեց ինձ նայել:

Կէս օրիցը շատ անց էր, հասայ մենաստունը: Կրօնաւորներն՝ տիրացուները և մօնթերը ժողովուած գնացած էին վայրի այգիքն շրջելոյ: Միայնակեցէն լսածներս արտագրում էի՝ մինչև նրանք վերադարձան: Էն գիշերը երկար նստեցանք զրոյց տուինք, և յետոյ բարի գիշեր ցանկանալով հեռացանք միմեանցից. իսկ ես կրկին նստեցայ աշխատութիւնս վերջացնել, որպէս զի վաղն կարդամ միւսանգամ միայնակեցի մօտը և սխալները կամ աւել պակասները նա ասէ՝ ուղղեմ:

Միւս առաւօտը ուշ վեր կացայ քնէս. մինչ թէյ էի խմում, ասեց ծառայս թէ՝ մեր ճանապարհորդակից թուրքերն Մակուից եկան գնան Չ.ուղու արգելանոցն, և ինձ են սպասում: Հրամայեցի ծառայիս, խնդրեց նոցա՝ եկեն ինձ մօտ թէյ խմեն:

Փոքր ինչ այս ու այն կողմից նրանց հետը խօսալուց յետը՝ խօսք բաց արի Ահմադ խան Մարաղեցւոյ վրայ, որոյ մասին ուղեկիցներիս մինը, որ նրանց մէջն առաջինըն էր, ասած էր ինձ ճանապարհին, որպէս սրանից յառաջ էլ յիշած եմ օրագրութեանս մէջն, թէ նրա սերունդէն է:

Ես սկսեցի ճշդութեամբ հետաքրքիր լինել: Ասեց նա, որոյ անունը Իբրահիմ–խալիլ աղայ էր, հայրս Նաղուբ խան է եղած, որ աղայ Մամատ շահի յետ Շուշի բերդումն սպանված է: Մայրս էր Ահմատ խանի դուստրն, որ իւր հօր մահուանից յետը ժառանգած է երեք գիւղ Մարաղայ, որոնք մինչեւ ցայժմ ունիմ, և ես ամուսնացած եմ Ահմատ խանի որդւոյ դստեր այս ինքն իմ քեռւոյ դստեր հետը: Այս շատ հետաքրքրական տեղեկութիւնները, որք կվերաբերէին նրա հօրը և մօրը, լսելով ստիպմամբ առանց նրանից իմացում տալոյ պատճառն, խնդրեցի այն երկու օրն ևս սպասեն ինձ ու միասին գնանք Գուլու արգելանոցն: Նոքա ընդունեցին իմ խնդիրքը, ես ևս իսկ և իսկ հենց նոքա դուրս գնացին, երեկուան նման նախաճաշիկս հետըս առնել տուի, գնացի դէպ ի քարանձաւն: Մտքումս դրի առ այժմ սորա այս ինքն իւր որդւոյ անունը չասեմ միայնակեցին, որպէս զի հոգին չխառնուի, և կիսատ չթողնէ իւր պատմութիւնը:

(Շարունակելի)

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՇԽԱ՞ՐՀՍ ՓՈԽՈՒԱԾ Է՛ ԹԷ ՄԱՐԴԸ,

ԿԱՄ

ՀՆԱՍԷՐՔ ԵՒ ՆՈՐԱՍԷՐՔ.

Հնասիրութեան հակամէտ անձինք՝ տեսնելով նոր ժամանակի երբեմն մխիթարական եւ երբեմն անմխիթար երեւոյթները՝ եւ չկարողանալով բացատրել ինքեանց՝ անոնց հիմնական պատճառները՝ շատ բնական բացագանչութիւններ կընեն ամենայն տեղ ասելով՝ թէ «աշխարհս փոխուած է, առաջուան մարդիկ չկան, ո՞ւր է մեր տեսած առատութիւնը, ոսկիները պղինձ դարձած են, նոր սերունդը հոգով և մարմնով նուաղած է՝ կամ որ աւելի սովորական է ասել՝ թէ «աշխարհի վերջը հասած է»:

Վերջին բացագանչութիւնը — «աշխարհի վերջը հասած է՝ տրամաբանական եզրակացութիւնն է «աշխարհս փոխուած է» ենթադրութեան այնպէս, ինչպէս որ պատճառը ըստ ուսումնական օրինաց աղբիւր կհամարուի որ եւ է հետեւանաց: Պէտք չէ զարմանամք, որ այս տեսակ ուղիղ եւ ողջամիտ տրամաբանութեան արձագանք կլինի հասարակ ժողովրդեան կամ չզարգացած մարդկային մտաց համոզման եթէ մեր միտքը բերեմք այն ճշմարտութիւնը, որ ինչպէս նոր օրէնքը հնոյն վերայ հաստատուած է աւելի մշակութիւն եւ ազնուութիւն ընդունելով մի եւ նոյն հին մարդոց նոր սերունդէն, այսպէս նաեւ մարդ-

կային ազգին ի նախախնամութենէ հաւասարապէս շնորհած բանականութիւնը ողջմտութեամբ խորհել կուտայ թէ հին եւ թէ նոր մարդոց այսու եւեթ տարբերութեամբ, որ հինը անգիտակցաբար՝ մութ ու անորոշ կերպով կընէ իւր կանխատես գուշակութիւնները. իսկ նորը իւր ուսման ու զարգացման շնորհիւ գիտակցաբար՝ պարզ ու որոշեալ կերպով կուտայ իւր վճիռները եւ թուաբանական օրինօք կջանայ իւր ենթադրութեան կամ կանխատեսութեան օրինաւորութեան եւ ճշմարտութեան կերպարանք շնորհել։

Այս ինքն թէ երկուքին ալ նպատակը ու վախճանը նոյն է հնոց եւ նորոց, զարգացելոց եւ չզարգացելոց, գիտնոց եւ տգիտաց՝ իբրեւ մի եւ նոյն սերնդոց միոյ նախահօր մարդկութեան, սակայն նպատակին հասնելու միջոցները իրարմէ կտարբերին հնոյն անշարժութեամբն ու նորոյն գործունէութեամբ, եւ այս նորոյն գործունէութիւնն է՝ որ հինը կատարելագործութեան ճանապարհը կառաջնորդէ. շատ անգամ յակամայս հնոյն այնպէս, ինչպէս որ շոգենաւն առագաստաւոր նաւը ի վտանգին կարող է վարել հողմոց բռնութեան դէմ կամ շոգեկառքը ծանրաշարժ ու դժուարատար առարկայից անհնարին արագութիւն մի տալով՝ անհամեմատ առաւել դիւրութիւն կընծեռէ անոնց փոխադրութեան ու յառաջխաղացութեան։

Այս պատճառով աւասիկ երբ ի բացատրութիւն ժամանակի տիրող հանգամանաց եւ մարդկային դրութեան կստեղծուին ընդհանուր մարդկութեան կամ առանձին ազգաց մտաց զարգացման աստիճանը արտայայտող բառեր, ինչպէս են յառաջադէմ եւ յետադէմ, լուսաւորեալ եւ խաւարեալ, հին եւ նոր եւլն բառերը, որոց առաջինները հաւասարազօր են գէտ-ութիւն եւ վերջինները ռըգէտ-ութիւն բառերու։ Այս երկու գաղափարները, որչափ ալ իրարու հակառակ լինին՝ միմեանց հետ անբաժան են եւ զուգընթաց. իրարու գոյութիւնը կը պահպանեն, ինչպէս հոգին ու մարմինը, եւ եթէ կրօնական կետէ նայիմք այս խնդրոյ վերայ եւս, անշուշտ պէտք է ենթադրել, որ մարմնոյ նման տգիտութիւնը մահկանացու կլինի եւ հոգւոյ նման գիտութիւնը — անմահ, եթէ տգիտութիւնը մեռցընելով գիտութեան յարգը ճանչնամք եւ անմոլար շաւղով գիտութիւնը կարողանամք ուղղել ի գիւտ փրկութեան, ճշմարտութեան, յաւիտենական կենաց կամ որ նոյն է մարդկային ազգի էական եւ իրական վերանորոգութեան։

Մարդկային կենաց չափաւորեալ տարիներն ու մահը անչափութեան եւ անմահութեան գաղափարը չեն փոխեր մեր մտաց մէջ՝ տեսնելով մեր տեղ մեր որդւոց եւ թոռանց փոխանակութիւնը, եւ այսպէս ընդհանուր մարդկային ազգի անդադար դիմումը դէպ ի կատարելագործութիւն՝ զարգացեալ ու բարոյագէտ մարդոյ սրտին մէջ սնուցանել կուտայ այն գեղեցիկ յոյսերը, որովք քրիստոնէութեան աշխարհը սովոր է ակն ունել նոր երկինք եւ նոր երկիր կամ մարդկային ազգի ճշմարիտ երջան-

կուլթեան ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ։

Ո՞չ ապաքէն հին եւ նոր սերունդը գիտակցաբար եւ անգիտակցաբար կդիմեն դէպ ի այս վախճանը, հինը նորոյն իբրեւ աղբիւր եւ առաջնորդ այս աշխարհի վերայ, իսկ նորը, — կուզեմ ասել գիտութեան կամ ինքնակրթութեան հետեւողները եւ ո՛չ ոգէտ մնացողները, — իբրեւ նոյա արդիւնաւոր գործակատարներ հասնելու համար մեզ յԱստուծոյ նախասահմանեալ փառաւոր քրիստոնէական ապագային։

Եթէ իրաւ է մեր այս ենթադրութիւնը, թէ հին եւ նոր մարդը մի եւ նոյն նպատակի համար կաշխատին, ինչու համար ուրեմն հին եւ նոր մարդոյ մէջ կտեսնուի կարծեաց տարբերութիւն մի, զգալի հակառակասիրութիւն մի, իրարու չհաւնելու տարօրինակ մէկ ձգտում մը, որ շատ ազգաց մէջ երբեմն մինչեւ անհաշտելի ատելութեան հասնելով՝ տեղիք կուտայ այն սոսկալի յեղափոխութեանց ու երեւոյթներու, որ հնոց եւ նորոց արեան հեղեղները կը վազցընէ եւ մարդկային ազգի բանականութեան վերայ անարգանաց արգար կնիքը կդրոշմէ, խաղալիկ կընէ մարդկային ազգի բաղդի այլ եւ այլ հաճոյից եւ վայրենեաց հաւասար աստիճան կստորացնէ։

Աստր պատճառն ու պատասխանը որչափ պարզ է, այնչափ ալ դժուարին ու անլուծանելի։ Պարզ է այն, որ այն ամենայն հնութիւն եւ հնասիրութիւն՝ որոյ արժանիքը ապացուցուած չեն կամ հիմնուած չեն ճշմարիտ գիտութեան ու փորձառութեան հետեւանաց կամ արդեանց վերայ՝ չեն կարող համարուիլ օրինաւոր բաներ կամ ժամանակի արդար պահանջներ. ասոր նըման ամեն նորութիւն, որ կուզէ մեղանչել հին ու ապացուցուած ճշմարտութեանց դէմ, որ կձգտի ընդ պատրուակաւ նորութեան եւ նորասիրութեան դէպ ի անօգուտ եւ վնասակար բաներ, ապօրինի է եւ անընդունելի։ Այս տեսակ հնութեանց եւ նորութեանց գոյութենէն աւասիկ կծագի մոլորութիւն եւ կարծեաց անհամաձայնութիւնը, որ առատ նիւթ կուտայ այլ եւ այլ դատողութեանց, հակաճառութեանց օրագրաց եւ լրագրաց մէջ։

Ասոր համար է անշուշտ, որ երբ հընութիւնը կբացագանչէ «աշխարհն փոխուած է, մարդիկ փոխուած են, աշխարհի կերպը հնացած է», աւաղելով զայն կբացագանչէ եւ ո՛չ ուրախանալով. մանաւանդ հինն ու նորը թէպէտ կուզեն որ «աշխարհն փոխուի, մարդիկ փոխուին եւ նոյն իսկ աշխարհի կերպը հնանայ», բայց ողջմտութեամբ կուզեն որ ի լաւն փոխուին եւ ի կատարելուն թէ աշխարհս եւ թէ՛ ինքեանք եւ թէ՛ ապագայ սերունդը՝ աշխարհիս վերջը հասնի ո՛չ թէ կործանմամբ աշխարհին եւ մարդկային ազգի ջնջուելովը, այլ յաւիտենական կեանքն ու անվախճան վայելքները ձեռք ձգելով՝ Նոր երկին եւ Նոր երկիր ժառանգելով ըստ տէրունական անսուտ խոստման։

Դժուար է եւ ըստ իմիք անլուծանելի այն՝ թէ ե՞րբ պիտի հասնի այդ ցանկալի բարեփոխութեան մարդկային ազ-

գը եւ պիտի կարողանամ՞ հասնել կատարելապէս եւ արժանաւորապէս այդ ակնկալեալ վայելից։ Մարդկային ազգը կասեմ եւ ո՛չ առանձին մարդիկ, վասն զի անխուսափելի մահը շատ շուտ վերջ կդնէ առանձին մարդոյ աշխարհային վայելից եւ իւրաքանչիւր քրիստոնեայ կհամոզուի խղճի գիտակցութեամբ եւ հոգւոյ անմահութեամբ ճաշակել յետ մահուն այդ բարեփոխութեան՝ վարձուց կամ պատժոյ իրագործուելուն արդիւնքները ըստ իւրաքանչիւր գործոց՝ թէպէտ այս աշխարհի վերայ եւս մասամբ իւիք բարի կամ չար մարդիկ ըստ իւրաքանչիւր արժանեաց ապագային վարձուց եւ պատժոց ճաշակը կառնուն։

Ամեն հինը տգիտութիւն չէ, եւ ոչ ամենայն նորը գիտութիւն։ Տգիտութիւն է հինը՝ եթէ կամակոր է եւ առողջ դատողութենէ զրկուած, թէեւ այլ եւ այլ ուսմամբք եւ գիտութեամբք զարդարուած լինի, զոր գեղեցիկ, ճարտարարուեստ՝ բայց անխօս ու անբան արձանի կրնամք նմանցընել. տգիտութիւն է եւ նորը՝ եթէ իւր ուսմունքն ու գիտութիւնը ի բարին գործածել չգիտեր, այդպիսի նորը իրաւունք ունիմք անօգուտ ու անիմաստ թութակի նմանցընել. իսկ սոցա հակառակ գիտութիւն են եւ ճշմարտութիւն այն նորութիւնն ու հնութիւնը կամ այն նոր եւ հին մարդիկ, որք ողջամիտ ուսման շնորհիւ կամ բազմամեայ փորձառութեամբ գիտեն նպատակի մը հասնելու քաղաքական կողմերը ընտրել, եւ ամենայն բանի նախադասել զուտ քաղաքականութիւնը կամ ճշմարիտ աստուածպաշտութիւնը։

Այս դարու ամենայն հնասէրները տըգէտ համարելը սխալ է, եւ ամենայն նորասէրները գիտուն անուանել ճշմարտութեան դէմ մեղանչել է. վասն զի առօրեայ փորձը կցուցընէ, որ հնասէրաց մեծամասնութիւնը մաքուր ու բարոյական հին սկզբանց եւ ճշմարտութեանց համար մաքառելով յանիրաւի հնասէր տիտղոսը իբրեւ անարգանաց կնիք ընդունած են, իսկ նորասէրները՝ բացառութեամբ ճշմարիտ գիտնականաց եւ փիլիսոփայից՝ յաչս հնասիրաց պշգալի մօտայի չափ նշանակութիւն մի ունին, մանաւանդ թերուսումն եւ թեթեւսոլիկ անհատներ, որոց թիւը օր քան զօր կաճի եւ կաւելնայ եւ ճշմարիտ բարոյականութեան հիմունքը անգիտակցաբար կսպառնայ տապալել ի գետնիւթական շահուց եւ անցաւոր վայելից։ Ի՞նչպէս ուրեմն չբացագանչէ պատկառելի հնութիւնը՝ թէ նոր սերունդը հոգւով եւ մարմնով նուաղած է։

Մեր այս խորհրդածութիւնը ընդհանուր մարդկային ազգի նկատմամբ եթէ անյարմար է ու սխալական, մեր ազգի վերայ դարձընելով՝ ցաւալի ճըշմարտութիւններ իւր մէջ կպարունակէ, զօ. ո՞ր ազգի մէջ այնչափ աչքի կզարնէ նորասիրաց բազմութիւնն ու անխորհուրդ արարմունքները, որչափ մեր ազգին մէջ, այնու եւեթ տարբերութեամբ, որ ուրիշ ազգաց մէջ նորասէրները գոնեա բաւական ուսումն ունին, կրթութիւն եւ լեզուագիտու-

թիւն, իսկ մերինները այբուբենին շատ անգամ անհմուտ նորասէրներ են։

Տէր ու հնասէր, նահապետական կեանքի սովոր Հայը ցաւօք սրտի նկատելով այդպիսի նորասիրաց գայթակղեցուցիչ ընթացքն ու յախուռն գործողութիւնները, հին ու գովելի բարեպաշտութեան, աստուածսիրութեան նուազումը, դէպ ի բողոքականութիւն եւ կրօնափոխութիւն դիմելը, գլուխը շարժելով ու աւաղելով աշխարհս փոխուած է ասելով ակնտակավառ մօրուքը խորախորհուրդ դէմքով կշոյէ, մանաւանդ երբ այդ նորասէրները բաւական ուսման եւ գիտութեան հետ մայրենի կրօնն ու լեզուն անարգելու ձգտումներ ալ կարտայայտեն՝ այն ատեն աշխարհնիս վերջը հասած է ասելով յոգւոց կհանէ եւ ակամայ կամօք դէպ ի ազգային դպրոցներն ու եւրոպական լուսաւորութեան ունեցած համակրութիւնը կսասանի։

Պակա՞ս են մեր մէջ այնպիսի եկեղեցականներ, որ եւրոպական եկեղեցականաց միայն նիւթական հանգստութիւնը կուզեն վայելել առանց նոցա մտաւոր ու բարոյական զարգացման մէջ ունեցած արժանիքը գոնէ ըստ մասին անձանց սեպհականացընելու. պակա՞ս են մեր մէջ այնպիսի գրագէտներ, որ անհարազատ ու օտար աղբիւրներէ քաղելով իւրեանց ուսումը ու գաստիարակութիւնը՝ մեր ազգի եկեղեցւոյն եւ լեզուին անբնական նորութիւններ կուզեն պատուաստել եւ երբ գովելի ընդդիմադրութեան առջեւ կխորտակուին իրենց անփորձառու ու հակազգային ձգտումները՝ վշտացեալ ու զայրագնեալ սրտիւ հնասէր, հնամոլ, նախապաշարուած, յետադէմ եւլն բառերով կփութան պսակել իւրեանց հակառակորդները, — ազգի եւ եկեղեցւոյ ճշմարիտ բարեկամները, — եւ այդ անարգական տիտղոսներով կհամարին յաղթել շատ օգտակար հնութեանց եւ մուծանել շատ մի վնասակար նորութիւններ։

Զաւակատէր ծնօղք տեսնելով որ դպրոց յաճախող իւր զաւակունքը հետզհետէ կխորշին եկեղեցի երթալէն, կսիրեն մեղանչել հնազանդութեան պարտուց դէմ եւ անհնարին ազատասիրութեան հետ անսպատկառ լրբութիւնը ակնյայտնի կպարզեն, ի՞նչպէս չբացագանչէ՝ թէ ժամերն փոխուած են, բայց դժբաղդաբար դէպ ի վատը։

Ո՞չ ապաքէն անխտիր նորասիրութեան հետեւանք է նաեւ նիւթական հարստութեան նուազումը կամ անօգուտ բաներու դրամոց ծախսումը, որով կարեւորագոյն իրաց համար ո՛չ միայն մասնաւոր ազգաց, այլ եւ մեծամեծ տէրութեանց մէջ ոսկիները պըղինձ կդառնան, իսկ առանձին ընտանեաց եւ գերդաստանաց մէջ պղինձներն ալ հատնելով՝ թշուառութեան ու չըքաւորութեան աղէտալի տեսարաններ կընծայեն։ Ուրեմն հները իրաւունք չունի՞ն հարցնելու՝ թէ ո՞ւր է մեր պե-տուած կամ լուած աւանդութիւնը։

Նորասիրութիւնն ու աւելորդասիրութիւնը արդէն իսկ մարդոյս բնութեան մէջ կան, ինչպէս որ հեշտասիրութիւնն ու անձնդիւրութիւնը մարմ-

նոյ գլխաւոր հանոյքն են. ո՛չ ապաքէն ողջամիտ ուսման նպատակն է յաւելորդաց խորշեցուցանելով՝ կարեւորագոյնը ընձեռել կամ բարոյական մարդը բարձրացընել նիւթական մարդէն վեր, հոգին ու միտքը ազնուացնել ո՛չ եթէ սնոտի փայլերով ու արտաքին պճրանքներով, այլ օգտակար նորութեամբ, հաւաքելով մեղուի նման ծաղկանց միայն օգտակար նիւթերը, որպէս զի բարոյականութեան մեղրը վնասակար լեղւոյ հետ խառնուած լինելով՝ չվնասէ նոր մարդոյ հոգեկան եւ մարմնաւոր զօրութեան։

Խելացի եւ խոհեմ մարդիկ թէ հին լինին եւ թէ նոր, թէ հնասէր եւ թէ նորասէր, ծեր եւ երիտասարդ քաջ կարող են հնութեան եւ նորութեան մէջ որոշել վնասակար հիւթերը եւ եթէ նորը չաճապարէ ըստ երեւութին միայն քննել ու դատապարտել հնութեան եւ հնասիրութեան պահանջները, շատ դիւրաւ կարող է համոզուիլ մանաւանդ մեր ազգի շատ մի հնութեանց օգտակարութեանն ու նուիրականութեանը վերայ, զորս դժբաղդաբար շատերը իբրեւ աւելորդ բաներ կպախարակեն առանց մտաբերելու՝ թէ **ոչ ամենայն նորութիւն օգտակար է, և ոչ ամենայն հնութիւն վնասակար**։

Ճշմարիտ է այն, որ աշխարհիս շատ մի երեւոյթները փոխուած են, որք այնպէս կարծեցընել կուտան՝ թէ աշխարհս ալ փոխուած է։ Մարդիկ ալ աշխարհային երեւոյթներուն մէջը լինելով նոյնչափ ենթակայ են փոփոխութեանց՝ որչափ բնութեան կամ երկրիս ուրիշ զարդերը. բայց այս տարբերութիւնը կայ բնութեան զարդուց ու մարդոց մէջ, որ ո՛չ մէկ բան այնչափ ընդունակ է կամաւոր զարգացման, ինքնակրթութեան եւ կատարելութեան, որչափ արարածոց գերագոյն մարդը՝ իբրեւ նախախնամութենէն կարգուած իշխան եւ թագաւոր աշխարհային ամենայն ձեռակերտաց վերայ, որուն միանգամ շնորհուած լինելով բանականութեան շնորհը, բարին ու չարը որոշելու անձնիշխան կամքն ու ազատութիւնը, իւր հետ կարող է այս աշխարհի լաւ կամ վատ փոփոխութեան կերպարանք տալ, ազնուացընել զայն կամ կորդացնել, ինչպէս իւր իսկ բնութիւնըն ու հանճարը, եւ եթէ իբրեւ հող ըստ մարմնոյ աշխարհի հետ կապուած է, որոյ պայծառութեան եւ բարեզարդութեան կնուիրէ իւր մահկանացու կեանքը, ըստ հոգւոյ ժառանգ է երկնից, որոյ ստեղծողին փառաց եւ մեծվայելչութեան մասնակից պիտի լինի, եթէ այս աշխարհի մէջ հոգւոյ կամ բարւոյն ազդարարութեանցը, խղճի բարի թելադրութեանց ուշ դնելով՝ յաջողի բարեաւ չարին յաղթանակել, օգտակարը վնասակարէն նախադասել եւ առաջի անաչառ Դատաւորին պարզերես ելնել ասելով ըստ Սուրբ Գրոյն բանի՝ թէ «**Ծառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտն էր առնել՝ արարաք**»։

Ուշիմ ընթերցողը արդ ինքնին թող իմաստասիրէ՝ թէ աշխա՞րհս արդեօք փոխուած է կամ փոխուելու ենթակայ է, թէ մարդ՝ որ կարգեցաւ **Թագաւոր և իշխան աշխարհի**, եւ թէ մի՞ տեսակ հին

եւ նոր օգտակար բարեաց եւ ճշմարտութեանց մշակ հանդիսանալով հնասէրք եւ նորասէրք կարող են հասնիլ նաեւ երկնից թագաւորութեան ժառանգութեան, զոր կմաղթէ իւր սիրելի ընթերցողաց՝

ՀԱՅԿՈՐԴԻՆ.

ԲՐՈՒՏԸ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԸ.

Ա.

Մի մարդ ունէր իւրան տանն
Երկու աղջիկ աննըման.
Մէկը միւսից աւելի
Իրանց մօրը սիրելի:
Երկուքն եւս հընազանդ,
Երեսներին համեստ քօղք,
Չունէր նրանցից մի դանդատ
Ոչ հարեւան, ոչ ծընօղք:
Աւելն մէկի մերթ ձեռին,
Կուժը միւսի մերթ ուսին.
Երկուքն եւս նման 'ին
Աշխատասէր մեղուին:
Ապրէ՛ք, օրհնում ասում էր
Նոցա մայրը ամեն օր,
Բարո՛վ բախտով հարս դնաք,
Եօթը տղի մայր դառնաք:
Երբ որ նոքա մեծացան,
Երկուքն եւս հարսնացան,
Մէկը գնաց բըրուտի,
Միւսն երկիր գործողի:
Ամեն մէկի իւր այրը
Տարաւ հարսին իւր գիւղը,
Եւ իրարից շատ հեռու
Ապրում էին քորքն երկու:
Շատ ժամանակ անց կացաւ,
Եւ ոչ մէկից լուր չեկաւ,
Կարծես հօր—մօրն մոռացան
Երբ նոցանից հեռացան:

Մի օր տրտմած նոցա մայրն
Խնդրեց ասաց իրան առն,
Գնա́ եւ տես ինչ դառան
Մեր աղջկերքն եւ փեսան:
Ճանբայ ընկաւ նոյն օրը
Մարդը փայտը իւր ձեռին,
Եւ խեղճ կնկայ աչքերը
Մնաց մարդի միշտ ճանբին:
Շատ չքաշեց եա եկաւ
Եւ իւր կնկան նա ասաց,
Լա՛ւ բախտ մեր դուռն եկաւ,
Լա՛ւ տեղ տուինք մեր աղջկանց:
Մեր այն բրուտ խեղճ փեսան,
Օրուան հացի կարօտն այն,
Հինգ վեց կաւէ մեծ աման
Շինել դրել էր դըռան:
Եւ երկընքի բացուելուն
Արեւի էր սպասում,
Որ իւր ամանն չորանար՝
Տանէր ծախէր հացի տար:
Գո́ւ եւս, ասաց աղջիկս ինձ,
Խնդրիր Աստուած արեւ տայ,
Թէ ոչ, եթէ անձրեւեց,
Մեր ամաններ կփչանայ:
Աղօթք արի եւ, ճանբայ
Միւենոյն օրն ես ընկայ,
Եւ շուտ մօտի գիւղն հասայ,
Միւս փեսիս տունն մտայ:
Տեսայ տխուր նստած էր,
Աղջիկս էլ լացում էր,
Հարցրի պատճառըն ինչ էր,
Ի՞նչ էր նորանց պատահել:
Է՛հ՝ ինչ անեմ—ինչ ասեմ,
Ասաց լալով մեր փեսէն,
Չըռնէր իմ սերմ, ոչ իմ արտ,
Երբ որ չունենք մեզի բախտ:
Էս մէկ ամիս է հիմա
Արտս վարել ցանելի՝
Ասում եմ էս է հիմա
Երկինքն ամպ է՝ կանձրեւի:
Բայց ամպերը քարացած
Անձրեւները ուշացած,

Եւ սերմերս նոր ծլած
Քիչ է մնում չորանան:
Եթէ մի երկու օր էլ
Անձրեւ չըգայ չըջրի,
Հողը գլխիս է եկել,
Քաղցած մեռնինք մենք պիտի:
Նորա համար Աստուծուց
Միշտ անձրեւ ենք մենք խնդրում,
Իւր ողորմած շնորհից
Մի կտոր հացի սպասում: —
Լացաւ աղջիկս, ինձ ասաց,
Դու եւս խնդրիր, որ Աստուած
Մեզ շուտ անձրեւ ուղարկի,
Մեր խեղճ տունը չքանդի:
Աղօթք արի, դուրս եկայ,
Ճամբին որքան շուռ եկայ՝
Ո՛րքան մտքումս ման եկայ
Ես այս խելքը չգտայ
Թէ ո՞ր փեսին մեր պիտի
Աստուած աղօթքին լըսի,
Ո՞ր աղջըկաս տուն քանդի՝
Որ միւսի տուն շինի:

〰〰〰

ՈՒՂՏԸ ԵՒ ԱՂՈՒԷՍԸ:

———

Բ.

Մի ծեր աղուէս պատահեց
Մի օր յանկարծ մի ուղտի,
Որ արձակած իւր բեռից
Արածում էր ի դաշտի:
Խեղճի մարմինն չորացած,
Ոսկր եւ կաշին էր մնացել,
Եւ ողջ մազերն վար Թափած,
Ոտից գլուխն քոսոտել:
Նորա սապատըն ուռած
Այնքան վէրքով էր պատած,
Որ աղուէսի գութ շարժեց՝
Ուղտի ցաւը հարցըրեց:
— Մի տէր ունիմ անխղճմտանք,
Ասաց, տասը տարուց վեր,
Որ ինձ բաց ի չարչարանք՝
Ուրիշ մի բան չէ տուել:

Ջունի ոչ տօն, ոչ ուրբաթ,
Ոչ խղճմըտանք, ոչ հաւատ.
Ես չեմ տեսել իմ կեանքում
Եւ ոչ մի օր հանգստեան:
Առաւօտից իրիկուն
Նորա բեռը եմ կրում,
Ա՛յնքան է նա ինձ տանջում,
Որ գիշերն քնել չեմ կարում:
Վաթսուն լիտըր իմ մէջքիս
Աղ է բարձում մի հանքում,
Առանց խղճալ վէրքերիս
Մինչեւ քաղաք ինձ քշում:
Տանըր բեռը շալակիս
Օրը երեք չորս անգամ
Երկու մղոն պէտք է ես
Երկար ճանբաս գնամ գամ:
Հերիք չէ դեռ ինձ համար
Դար ու վեր եւ սար ու քար,
Պէտք է դեռ մի մեծ գետից
Անցնեմ ծանր բեռն ուսիս:
Այս է իմ օրն — իմ սեւ կեանք,
Անգութ տիրոջս խղճմըտանք.
Գիտես ցաւիս Թէ մի ճար,
Ասա խնդրեմ ինձ համար: —
Ցածրացրեց իւր պոչը
Փիլիսոփայ աղուէսը,
Մի լաւ խորը մտածեց,
Տնկեց պոչը եւ ասեց.
Երբ կմտնես դու գետը
Նստիր ջրի մէջ տեղը,
Աղը ջրում կը հալուի,
Բեռիդ կէսը կպակսի:
Ուղտը ուրախ շնորհակալ՝
Երբ գետի մէջ տեղն հասաւ,
Գործադրեց այն հընար,
Տեսաւ բեռը Թեթեւցաւ:
Եւ այնուհետ իւր ցաւին
Այդպէս էր նա դեղ անում,
Եւ տալիս փառք — ողորմի
Հօր ու մօրը աղուէսի:
Բայց այդ խելօք խրատ — ճար
Զօգտեց իրան շատ երկար,

Եւ իւր վէրքին շատ էլ թանգ
Նստաւ վերջը այդ հնարք:
Անդուռթ տէրը երբ տեսաւ
Ուղտը ջրին սովորեց,
Բեռը փոխեց — բուրդ բարձաւ,
Քաղաք կրել սկսաւ:
Բարձած ուղտը միամիտ
Հասաւ թէ չէ այն գետը,
Սովրած ճարը ընկաւ միտ,
Նստաւ ջրի մէջ տեղը:
Բայց այս անգամ աղուէսի
Խրատն քանդեց նորա տունն,
Վ,աթսուն լիտրը բեռն' մէջքի
Շինեց ջուրը իննսուն:
Մինչեւ գետից դուրս եկաւ,
Հողին բերանըն եկաւ,
Էլ չկարաց փոխել քայլ,
Ընկաւ գետին շնչասպառ:
Գլխիս էս ի՞նչ ծիւն եկաւ,
Գետը, ասաց, վրէս հեծաւ:
Յանկարծ աղուէսն վրայ հասաւ,
Ուղտի +էֆէ հարցըրաւ:
— Միթէ տեսնում չես ճաւըս,
Էլ ինչ հարցնել ինձ կուզի,
Վ,աթսուն լիտըր մէջքի բեռս
Դառել է սար երկաթի:
Բռնել չկարաց աղուէսը
Իրան զնչի ծիծաղը,
— Գիտեմ գլխիդ եկածը
Ասեմ, ասաց, քո ճարը:
Այնքան նստիր քո տեղը
Մինչեւ ծագի արեւը,
Երբ չորանայ թաց բուրդը'
Կթեթեւնայ քո բեռը:
Արդ քեզ խրատ, ուղտ եղբայր,
Որ ճօդ է միայն շատ երկար,
Եւ մի մսխալ խելք չունես
Բուրդը աղից դու ջոկես:

Թարգմանեաց ի պարսկերէնէ

ՍԱՄՈՒԷԼ ԳԻՒԼԶԱՏԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

ԲԱՐՁՐԱԳԱՏԻՒ ՄԵԾ ԻՇԽԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՆ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

Ի 4ն ամսոյս յաւուր երկուշաբաթի Կայսերազն Մեծ Իշխան Բարձր. Միքայէլ Նիկոլայեւիչ Փոխարքայն Կովկասու, — յԻկտիր Վսեմ. Արշակ Տէր Ղուկասեան զօրապետի բանակին այցելութեան գնալոյ առթիւ' — եւրոպական ժամը 11 ին ժամանակները բարեհաճեցաւ գալ հասանել ի Վաղարշապատ, ուր Ս. Էջմիածնի Միաբանութիւնը արժանաւոր հանդիսիւ դիմաւորեց եւ տարաւ զնորին Բարձրութիւն ի Ս. Տաճար. առ դրան Տաճարին Վեհ. Հայրապետ մեր դիմաւորեց զնորին Բարձրութիւն, եւ հրաւիրեց տարաւ Աւագ Սեղանոյ դիմացը, ուր փառաւորութեամբ եւ շքեղ հանդիսիւ մաղթանք կատարուեցաւ Օգոստափառ Կայսեր եւ Մեծ Իշխան Փոխարքային համար:

Մաղթանքէն յետոյ Բարձր. Մեծ Իշխանը Վեհափառ Հայրապետին հետ ի Վեհարան ելաւ' ուղեկիցներովը միատեղ: Այնտեղ զկնի ճաշելոյ Կայսերազն Մեծ Իշխանը մէկ ժամի չափ Վեհափառ Հայրապետին հետ տեսակցելով' զկնի կէսաւուր մեկնեցաւ գնաց դէպ յԻկտիր:

Նորին Կայսերական Բարձրութեան հետ ի միասին ուղեկից էին

Նորին Կայս. Բարձրութիւնն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայելովիչ (իւր որդին).

Իշխան Կոստանդին Պետրովիչ դուքսն Օլտենպուրկի.

Զօրապետ Պլատոն Պ. Պաւլով.

Պարոն Վինտեր
Ֆօն Պետերս } գնդապետք, Նորին Բարձրութեան ատիւտանդք.

Պրակեր գնդապետ.

Բժշկապետ Ալբանոս.

Պատկերահան Փիլիպով։

Ի ՆՊԱՍՏ ԲԱԳՐԵՒԱՆԴՑԻ ՀԱՅՈՑ Ի ՃԵՄԱՐԱՆԻ.

Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի Ս. Գէորգեան ճեմարանի աշակերտքը մէկ ամիս է ի վեր աչքերուն առաջն տեսնելով մօտերս Օսմանեան Հայաստանէն այս կողմերս բերուած հայկազանց խեղճ եւ թշուառ վիճակը, գեղեցիկ զգացմամբ եւ քրիստոնէավայել մարդասիրութեամբ՝ ինքնայօժար կամօք ցանկացան ըստ իւրեանց կարողութեան փոքրիկ օգնութիւն մի անել այն թշուառներուն, ուստի իւրեանց մէջ 67 րուբլի փող հաւաքեցին եւ ճեմարանի կարգապահ Պ. Գալստեանի միջոցաւ ի 21ն ամսոյս ներկայացուցին Վեհափառ Հայրապետի Ազգիս, որ շատ ուրախացաւ աշակերտաց այնպիսի գեղեցիկ զգացմանց եւ գնացից վերայ, գովեց նոցա այս առաջին քայլը ի բարեգործութեան ասպարիզին, օրհնեց զիրենք, եւ հաւաքուած 67 րուբլին յանձնեց Սինոդին՝ որ անցընէ յառանձին մատենին որ ի նպաստ վերոյիշեալ մերազնեայ գաղթականաց։

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ.

Յունիս ամսոյ $^{3}/_{15}$ին վախճանուեցաւ Փարիզում Ազգիս ընդհանրութեան լաւ յայտնի բազմարդիւն եւ պլեզարդ Թէոդորեան Սարգիս վարդապետը իւր 97— ամեայ հասակում։ Ժամանակին եւ հմուտ անձանց թողնելով արժանայիշատակ հանգուցելոյ լիակատար կենսագրութեան պատրաստութիւնը, աւելորդ չեմ համարում յիշել այստեղ համառօտապէս նորա դարաւոր կեանքի նշանաւոր անցքը եւ թաղման հանդէսը։

Հայր Սարգիս վարդապետը ծնուել է Հայաստանի Բաղէշ քաղաքում (Տաճկաստան) անցեալ դարու վերջերում։ Արդէն մանկութեան հասակից ի վեր ուսման մեծ եռանդ ցուցանելով եւ չկարողանալով լիապէս կատարել այդ փափագը իւր ծնողների անձեռնհասութեան պատճառով՝ երիտասարդ Սարգիսը գնում հասնում է մինչեւ Վենետկի միաբանութեան Ս. Ղազարի վանքը։ Այստեղ իւր ուսմունքը լրացնելով մեծ յառաջադիմութեամբ՝ մանաւանդ հայկական լեզուի մէջ, եւ ստանալով եկեղեցական այլ եւ այլ աստիճաններ, երիտասարդ վարդապետը սկսում է այնուհետեւ նշանաւոր դեր խաղալ Մխիթարեան միաբանութեան գործերի մէջ։ Զարմանալի ազգասիրական եռանդով բորբոքուած՝ Թէոդորեանը միանգամայն նուիրում է իւր անձը իւր սիրելի Ազգին։ Ահա այդ ազգասիրական եռանդն էր որ յորդորեց նորան երկու անգամ հեռաւոր եւ տաժանելի ճանապարհորդութիւն կատարել ի Հնդկաստան արժանայիշատակ Սամուէլ Մուրատի կտակը կատարելու համար. ահա դոյն այդ եռանդն էր որ նորան ոգի եւ համբերութիւն կտար մաքառել այն վիշտերի եւ նեղութիւնների հետ, որը կկրէր շատ տարիների ընթացքում մանաւանդ Մխիթարեան միաբանութենէն Մուրատեան վարժարանը հաստատելու եւ կառավարելու գործոյ մէջ։ Այս անցքերի պատմութիւնը արդէն յայտնի է Հայ ընթերցող հասարակութեան հանգուցելոյ քրտնաշխատ չորս հատոր «Պատմութիւն Մուրատեան վարժարանի» անունով գրքից, այստեղ բաւական է յիշել որ՝ Հայր Սարգիսը՝ ինչպէս երեւում է մնացած ձեռագիր թղթերէն՝ հասուցած է Մխիթարեան միաբանութեան յիշեալ ուսումնարանների

համար մօտ երեք միլիօն ֆրանկ (համարեա մէկ միլիօն մանէթ, ռուբլի) գումար: Հարիւրաւոր նամակներ, որք կան արժանայիշատակ հանգուցելոյ գրասեղանում, ցուցանումեն որ նա մինչեւ իւր վերջին շունչն զբաղուած է եղել Մուրատեան վարժարանի խնդրով:

Լուսաւորչական ծնողներէն ծնուած եւ ապա Մըխիթարեան միաբանութեան մէջ առ ի հարկէ կաթոլիկ դարձած' Հայր Թէոդորեանը իւր գործունէութիւնը յատկացուցած էր միշտ ամբողջ ազգի շահերին, առանց կրօնական խտրութեան: Բայց տեսնելով որ Մխիթարեանք սկսեցին հետզհետէ շեղուիլ ազգասիրական ուղիղ ճանապարհէն' աշխատելով աւելի ազգը կաթոլիկ դարձնելու' քան թէ նորա ընդհանուր յառաջադիմութեան նպաստելու, եւ քաջ համոզուած լինելով որ առանց կրօնական հարազատութեան մայրենի եկեղեցուն չէ կարելի հարազատ որդի լինել հայրենեաց, արժանայիշատակ Հայր Սարգիս վարդապետը ձգեց բացարձակապէս օտար կաթօլիկ կրօնը եւ վերադարձաւ մայրենի Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծոցը միւս երեք ընկերների, այն է' Հայր Ամբրոսիոս եւ Հայր Խորէն Գալֆայեանների եւ Հայր Գաբրիէլ Այվազովսքու հետ, բայց միանգամայն առանց որ եւ իցէ ակնկալութեան կամ փառախնդրութեան, որոյ ապացոյցն այն է որ' մինչդեռ նորա ընկերներից ոմանք պճնեալ զարդարեալ են եկեղեցական եւ արքունի շքանշաններով, եպիսկոպոսական բարձր աստիճաններով, արդիւնաւոր պաշտօններով եւ հարուստ ու փառաւոր կեանքով, սա այս ազնիւ եւ ժրաջան մշակը ազգաշինութեան, իւր հարիւրամեայ կեանքը կնքումէ վարդապետութեան համեստ աստիճանով եւ աղքատութեան մէջ:

Հայր Թէոդորեանը արժանաւոր տեղ ունի նաեւ ազգային մատենագրութեան մէջ մինչ ցարդ հրատարակուած գրաւոր աշխատութիւններով, որոց մէջ առաջին տեղը անշուշտ պատկանումէ նորա «Պատմութեան Մուրատեան վարժարանի»: Ցաւալին այս է որ' ինչպէս տեղեկացանք հանգուցելոյ իրեղէնները ցուցակագրող անձինքներէն' ոչինչ նշանաւոր ձեռագիր աշխատութիւններ չեն երեւում նորա գրասեղանում: Ասումեն թէ' հանգուցեալը թողել է միայն 1) մօտ երեք հարիւր նամակներ, որոց բովանդակութիւնը ըստ մեծի մասին վերաբերվում է Մուրատեան վարժարանին եւ մի քանիսը արդէն տպուած են յիշեալ «Պատմութեան» մէջ. 2) մի միջակ ձեռագիր տետրակ բառգիրք Ֆրանսերէն — Հայերէն. 3) մի նոյնպիսի բառգիրք աւելի համառօտ. 4) մի տետրակ կիսատ Յիշատակարան Մուրատեան վարժարանի. 5) մի համառօտ տումար այլ եւ այլ ծախուց, եւ 6) մի փոքր տետրակ մանր յօդուածներով եւ գիտելիք վերնագրով: Նաեւ լսումենք թէ հանգուցեալը իւր կենդանութեան ժամանակ սորան եւ նորան տուած է եղել իւր աշխատասիրութիւնները մաքուրը արտագրելու համար, բայց այդ պարոնները արդեօք հաւատարմաբար ի յայտ կածեն իւրեանց յանձնուած գրուածքները' թէ ոչ:

Արժանայիշատակ Հայր Սարգիսը նուիրելով բոլորովին իւր անձը Ազգին' միանգամայն մոռացել էր սեփական օգուտները, միլիօնաւոր գումարներ անցնելով իւր ձեռքէն' վերջին տարիներում գտանւումէր աղքատութեան մէջ: Բայց բարեբախտաբար ազգի մէջ դեռ եւս պակաս չեն ազնուամիտ մարդիկ, որք քաղցր եւ սուրբ պարտք համարելով պահպանել եւ մխիթարել ազգի ժրաջան մշակները' մեկնումեն նոցա իւրեանց օգնութեան ձեռքը: Այսպէս եւ Հայր Թէոդորեանը վայելել է շատ տարիների ընթացքում Փարիզում բնակուող Մեծապատիւ Մանանեանի եւ Վսեմափայլ Գէորգ բէյ Երամեանի խնամակալութիւնը ստանալով դրամաւոր նպաստ բաւական վայելուչ ապրուստի համար: Նոյն Մեծ. Երամեանը յանձն էր առել հանգուցելոյ թաղման ծախքը, որ եւ կատարուեցաւ բաւական շքեղ հանդէսով: Որովհետեւ Փարիզում չկայ ոչ հայկական աղօթատուն եւ ոչ քահանայ, ուստի հեռագրով հրաւիրուած էին Մանչեստերի Գերապատիւ Փիրղալէմեան Ղեւոնդ վարդապետը եւ Գերապատիւ Բաստամեան Վահան վարդապետը, որը արդէն գնացած էր ի Գերմանիա: Հանգստեան կարգը եւ օծման հանդէսը կատարուեցաւ հանգուցելոյ բնակարանում, ուր պատրաստուած էր եկեղեցական սեղան պատկերներով, խաչերով, ջահերով եւ այլ ամենայն պարագաներով: Հանգուցեալը դրած էր դագաղի մէջ զգեստաւորուած սաղավարտով եւ այլն. շուրջառներ պակասութեան պատճառով երկու վարդապետներ ծաղկեայ փիլոններ ունէին ուսին եւ վեղարներ

Օծումը կատարելուց յետոյ քարեշնորհ Վահան վարդապետը քնաբան առնելով հետեւեալ խօսքերը «Արարէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ»՝ մի համառօտ սրտաշարժ դամբանական ճառ ասաց, որով ցոյց տուեց թէ՛ ինչպէս հանգուցեալը հետեւելով Քրիստոսի այդ պատուէրին միշտ հետամուտ է եղել առաքինի եւ ազգային գործերին, մոռանալով իւր անձնական օգուտները եւ ապրելով միշտ եւ մեռնելով աղքատութեան մէջ: Թաղման հանդիսին ներկայ էին համարեա Փարիզի բոլոր հայերը թէ արք եւ թէ կանայք, ներկայ էին նաեւ Տաճկաստանի դեսպանատան առաջին քարտուղարը, Պարսկաստանի զինուորական նախարարի օգնական զօրապետ հայազն Ջանկիր խանը, Վսեմափայլ Օտեան Էֆէնտին, եւ քանի մի նշանաւոր Գաղղիացիք: — Բոլորի ուշադրութիւնը գրաւեց այն հանգամանքը որ՝ Մուրատեան վարժարանում նստող Մխիթարեան Աբրահամ եւ Աթանագինէս վարդապետները, որք հրաւիրուած էին առանձին տոմսակով, ներկայ չէին թաղման ժամանակ. կասեն թէ իբր հրաման խնդրել են Փարիզի Արքեպիսկոպոսից, բայց նա արգելել է. ահա մեր լուսաւորեալ Մխիթարեանների զզուելի կրօնամոլութիւնը:

Մի սեւազգեստ կառք ամպհովանով եւ հինգ այլ սեւազգեստ կառքերը, նաեւ մի քանի սովորական կառքերը կազմումէին հանգուցելոյ յուղարկաւորութեան հանդէսը. դագաղի վերայ սփռած պատուական շուրջառը գրաւումէր բազմաթիւ փողոցների խուռն անցուդարձ անողների ուշադրութիւնը եւ հետաքրքրութիւնը: Մարմինը ամփոփուեցաւ Փարիզի նշանաւոր Պէրլաշէզ անունով գերեզմանոցում: Գերեզմանի վերայ երիտասարդ ուսանող Պարոն Պէյլերեանը ասաց մի համառօտ, բայց շատ սրտաշարժ ճառ, որը վերջաբանեց այսպէս. «Տասն օր, պարոններ, գիշեր եւ ցերեկ, սոյն արժանայիշատակ հանգուցելոյ անկողնի մօտ էի. եւ սա մինչեւ իւր վերջին շունչն կրկնումէր թէ՛ ես այլ բան չունիմ կտակելու ազգին բաց ի Մուրատեան վարժարանէն, եւ խնդրումեմ ազգէն եւ նորա Հայրապետէն, որ այդ վարժարանին կենդանութիւն տան եւ մխիթարեն ազգի որբ եւ աղքատ մանուկների վիճակը եւ Սամուէլ Մուրատի յիշատակը»:

Այսպէս ուրեմն այս բազմավաստակ եւ բազմարդիւն մշակը նուիրելով իւր 97ամեայ գործունէութիւնը ազգին, կնքումէ իւր վերջին վայրկեանը դարձեալ ազգի վերայ մտածելով: Տեսնենք երբ կըկատարուի յիշեալ սուրբ եւ վսեմ կտակը:

Աւարտելով սոյն տխուր նամակը, հարկաւոր եմ համարում յիշել որ՝ Փարիզի գերեզմանատունները այնպէս լի են, որ այժմ գերեզմանատեղը ծախումէ քաղաքն մի որոշեալ ժամանակով, որոյ լրանալուց յետոյ մարմինը հանումեն եւ ուղարկումեն քաղաքից հեռաւոր տեղեր, այնտեղ թաղելու համար: Հանգուցեալ Սարգիս վարդապետի գերեզմանը գնուեցաւ տասը տարի ժամանակով: . . . .

Վերջում հարկաւոր է հրապարակական շնորհակալութիւն յայտնել Պ. Պէյլերեանին, Պ. Թիւյսիւզեանին, եւ մանաւանդ Պ. Թոմվանեանին, որք մեծ հոգացողութիւն ունեցած են հանգուցեալ Թէոդորեան Սարգիս վարդապետի վերայ թէ հիւանդութեան ժամանակ եւ թէ թաղման կարգադրութեան համար:

* * *

Ի 11—23 Յունիսի 1877 ամ.,
Ի Փարիզ:

ԲԱԳՐԵՒԱՆԴԻ ՀԱՅՔ.

Արդէն մերազնէից յայտնի է՝ որ Բագրեւանդ գաւառի (Ալաշկերտ, Հ. — Պայազիտ եւլն.) 14—18ի չափ գիւղորայից մէ հաստուածեալ եւ այս կողմերս բերուած են՝ որքան ստուգել կարելի եղաւ՝ 5-600 տուն Հայեր, եւ բոլորը աղետալի եւ թշուառ դրութեան մէջ կտագնապին եւ ծայրագոյն յուսահատութեան հասած կհեծեն դառնապէս:

Թողումք նոցա տնաւերեալ վիճակը՝ եւ ստացուածոց ու ապրանաց յափշտակուիլը, յիշեմք միայն բազմաց՝ իւրեանց բազմաթիւ սիրելիներէն զրկուի-

լը։ ի ճանապարհին . . . կրած անձնական կորուստները՝ այնպէս որ ոմանք մինչեւ անգամ չգիտեն թէ ինչ եղած են՝ ո՞ղջ թէ կենդանի՞ են իւրեանց ծնողք՝ կամ որդիք՝ կամ ամուսինք եւ կամ վերջապէս սյս ու այն ազգականքը եւ մինչեւ ցայսօր մէկ մասը մանաւանդ մանկունք ի տօթոյ՝ յանձրեւոյ եւ եղանակաց վատ ազդեցութենէն՝ նաեւ ուրիշ շատ պատճառներէն վտանգուելով՝ այլ եւ այլ հիւանդութեամբք մահուան զոհ գնացած են եւ բաւական տուներ իսպառ ջնջուած։ Աւելցուցէք սոցա վերայ նաեւ յառաջակայ ձմեռնային ժամանակը, յորում բնակարանէ՝ ուտելիքէ՝ հագուստէ եւ ծածկելիքէ զուրկ մնալով՝ անսովորական կամ նոր օդոց ներքեւ՝ չգիտեմք թէ քանի՛ անձինք պիտի յաջողին կենդանւոյն հասանել եւ ողջունել 1878ի գարունը։

Սրտաճմլիկ եւ աղեխարշ վիճա՛կ . . .

Ուստի Վեհ. Հայրապետ Ազգիս ամենակարեւոր եւ անհրաժեշտ օգնութիւնքը մատակարարել տալով ի Մայր Աթոռոյ աստի ինպաստ եւ ի մխիթարութիւն յիշեալ դժբաղդ Հայոց՝ Իւր սիրելի որդւոց, նաեւ Սինոդի միջոցաւ յատկապէս հրամաններ եւ հրահանգներ գրել տուաւ Գեր. Առաջնորդաց՝ Թեմ. Ատենից եւ Հոգեւ. Կառավարութեանց, որպէս զի այժմէն հանգանակութեանց ստորագրութիւններ բանան, քաղաքներում դրամ՝ իսկ գիւղերում ցորեան (կամ այլ բերք՝ յետոյ ցորենով փոխարինելոյ համար) հաւաքեն, որ յառաջակայ ձմեռում մատակարարուի վերոյիշեալ դժբաղդներուն եւ կենսական պիտոյքը հոգացուին. եւ եթէ նպաստն արդիւնաւոր լինի՝ նաեւ նոցա ապագայի համար մտածելով՝ գործիքներ եւ երկրագործական այլ պատրաստութիւնք եւ անասունք պիտի հոգացուին, ըստ որում բազմաց անասունքն եւս կոտորուած կամ յափշտակուած են . .։

Ասկէց զատ՝ Ապարանու, Նոր-Պայազիտի՝ Ծաղկաձորոյ եւ այլ տեղեաց գործակալութեանց Սինոդէն հրամանագրուեցաւ, զի յիշեալ թշուառ մերազնեայքը ըստ կարելւոյն մխիթարեն եւ Հայոց տուներում պատսպարեն՝ մինչեւ ցնոր տնօրէնութիւն։

Արդ սիրելի ազգայնոց կմնայ մեր այսպիսի թշուառ եղբայրներուն՝ ըստ իւրաքանչիւր կարեաց օգնելոյ համար աջակցել մեր Ազգային Վարչութեան եւ նպաստներ առատաձեռնելով՝ մխիթարել Բագրեւանդցի Հայերը։

Ողորմութիւնքը կամ նպաստները ուղղակի Սինոդին պէտք է հասնին, որ եւ ի ժամանակին արժանը կտնօրինէ։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ.

Արժ. Ստեփան Վարդապետ Մխիթարեանց Պես. եւ Նոր-Նախիջեւանի վիճակին Առաջնորդական Փոխանորդ կարգեցաւ ի տեղի Սարգիս Վարդապետի Տէր-Գասպարեանց։

Պ. ԳՈՒԹՈՒԼԻ.

[illegible] (Ժամանակ) դաղղիական լրագրի խմբագիրներէն մին եւ յատուկ թըղթակիցը եղող Մէծ. Պ. Շարլը մը Գու-

Թուղթ» — որ ներկայ պատերազմական գործողութեանց վերայ տեղեկութիւնք քաղելոյ եւ հաղորդելոյ համար այս կողմերս եկած է, այսօր ի Ս. Էջմիածին եւս հանդիպելով — Ի հաշիւ տուրքի նուիրեց ի նպաստ Ճեմարանի Մայր Աթոռոյս:

Յիշեալ ազնիւ Գազղիայլին բաւական հետաքրքիր է եւ կջանայ պատմական եւ վիճակագրական հարուստ տեղեկութիւնք հաւաքել: — Իւր Թարգմանն է Ագուլեցի Գ. Յովհաննէս Ալիխեան:

ՍԻՄՖԵՐԱՊՕԼՈՅ ՀԱՅՈՑ ԾԽ. ԴՊՐՈՑ

ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.

Թախանձանօք խնդրուած է հետագայի հրատարակութիւնը:

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Տեղւոյս ազգայինք, ինչպէս որ ուրիշ շատ տեղեր, չնայելով դպրոցին ուսման պարբերական միջոցին աւարտելուն, զաւակները կառնուն դպրոցէն ու եւ ինչ ժամանակ, կամ ուրիշ դպրոց կխրկեն եւ կամ կրպակի առջեւ կուտան, եւ այն ելող աշակերտաց ազգութեան եւ կրօնի վերայ ստացած տեղեկութիւնները անկատար կմնան եւ սովրածներն ամբողջութիւն չունենալով քիչ ժամանակէն կմոռցուին: Այս պակասութեան կերպով մը առջեւը առնելու մտօք կամեցանք ուսման պարբերական միջոցը կարճացնել. երեք տարի ժամանակի վերայ բաժնեցինք հոգեւոր իշխանութեան մեզի տուած հրահանգի մէջի առարկաները, որուն աղիւսակը այս տեղեկութեան հետ կհրատարակուի: Եւ 1874ին Սեպտեմբեր մէկէն նոյն ծրագրով սկսեցինք շարունակել, փորձը յայտնի ցուցուց որ այս մեր արած բաժանմունքը բաւական եղաւ, միայն բնական պատմութեան առանձին դասատուութիւնը չեղաւ դասատետրը չունենալով, բայց ընթերցանութեան ժամանակ բաւական տեղեկութիւններ տրուեցան. հաշուակալութեան վրայօք ալ ծանօթութիւն մը տրուեցաւ այս վերջին տարւոյս վերջին քառորդին մէջ, այն մտօք որ խանութի երես գնացող տղայք քիչ մը հաշիւ բռնելու տեղեկացած ըլլան, նոյնպէս եւ օրիորդք տնական ծախքերուն հաշիւները կարենան բռնել գիտնալ, բայց հարկաւ ասոնց բոլորն ալ համառօտ կերպով իբրեւ սկզբունք մը. Իսկ դպրոցը ունենայ միջոց բաժին մ'ալ աւելցունելու՝ հարկաւ աւելի օգտակար կըլլայ, բայց աշակերտք գոնէ 8 կամ 10 անձինք մնացած պիտի ըլլան:

Ահա երեք տարուայ բաժնուած ծրագրին իւրաքանչիւր տարւոյն

Աղիւսակներ.

Առաջին տարի, առաջին բաժին.

1. Այբուբենէն սկսեալ կարդալ որչափ եւ կարելի է անսխալ, եւ գրել նոյնպէս անսխալ բայց ծանր եւ դրածնուն վայելչութեանը չնայելով:

2. Ուղղագրութեան քանի մը պարզ եւ համառակ կանոնները սովրեցընել եւ ուղղագրել նախ բառեր եւ ապա խօսքեր:

3. Կարդացածնին հարցմամբ պատմել տալ որչափ եւ կարելի լինի, որով կսովրին եւ հասկընալու կերպով կարդալ:

4. Մտաւոր թուաբանութիւն, ամենապարզ խնդիրներ լուծել եւ յետոյ ճանաչել տալ թէ ինչ գործողութեամբ է իրենց լուծածը:

5. Համրիչի վերայ թիւեր կարդալ եւ համրիչ ձգել բայց ծանր: Իսկ 'յետ կէս տարւոյն հազարաւոր թիւեր կարդալ եւ գրել:

6. Ռուսերէն կարդալ եւ գրել այբուբենէն սկսեալ վերի ընթացքով:

Երկրորդ տարի, միջին բաժին.

1. Հայերէն ընթերցանութիւն առողանութեամբ՝ ոչ այնչափ ցած եւ ոչ այնչափ ծանր. բութ, ստորակետ, միջակէտ եւ վերջակետներուն ներգործութիւնները գիտնալ եւ ըստ այնմ կարդալ:

2. Ուղղագրութեան կանոններ եւ ուղղագրութիւն, եւ քերականութեան քանի մը պարզ կանոններ:

3· Կարդացածնին պատմել սկիզբէն հարցմամբ, իսկ յետ կէս տարւոյն սկսել առանց հարցման պատմել, եւ երբեմն պատմածնին գրել որչափ որ կարենան:

4· Ձեռագիր կարդալու կրթութիւն·

5· Կրօնագիտութիւն, Աղօթք եւ Քրիստոնէական վարդապետութեան կէսը, Գերապատիւ Գաբրիէլ Արքեպիսկոպոսի հեղինակութեամբը նոր տպուած գրքէն:

6· Սուրբ. գրոց պատմութիւն, աշխարհիս ստեղծմանէն մինչեւ ցգալուստ Քրիստոսի, պատկերներով:

7· Թուաբանութիւն, նախ համրել, թուանշաններ գրել եւ կարդալ· ապա ամենապարզ խնդիրներ լուծել:

8· Ռուսերէն ընթերցանութիւն առոգանութեամբ վերի ընթացքով:

Երրորդ տարի՝ վերին բաժին:

1· Հայերէն ընթերցանութիւն առոգանութեամբ, ոչ այնչափ շուտ եւ ոչ այնչափ բարձր՝ առանց եղանակի խօսակցութեան ձեւով:

2· Ուղղագրութիւն եւ այժմեան տեղւոյս լեզուին համեմատ քերականութեան կանոններ լուծել, բառերը ճանաչել, հոլովները եւ խոնարհումները գիտնալ, բայց առանց դասագրքի Պ· Մենինի ընթացքով:

3· Իրենք իրենց որչափ եւ կարելի է առանց քերականական սխալի պատմական բաներ գրել:

4· Գրաբառի ընթերցանութեան կրթութիւն եւ Աւետարանի խօսքերը պատմել իրենց լեզուովը:

5· Նոր Կտակարանի պատմութիւն, մինչեւ ցհամբարձումն Քրիստոսի եւ առաքելոց քանի մը գլխաւոր գործերը պատկերներով:

6· Հայոց պատմութիւն Հայկէն մինչեւ ցվերջ Ռուբինեանց տէրութեան՝ դասատետրով համառօտ:

7· Կրօնագիտութիւն, Քրիստոնէական վարդապետութեան մնացեալ կէսը եւ Եկեղեցական պատմութենէն գլխաւոր գիտելիքները:

8· Թուաբանութեան չորս գործողութեան խնդիրներ լուծել եւ տարւոյն վերջին քառորդին հաշուեկալութեան համառօտ տեղեկութիւն:

9· Ռուսերէն ընթերցանութիւն, առակներ բերան, եւ լեզուին ամենահարկաւոր կանոնները, ու կարդացածնին պատմել որչափ որ կարելի է:

Ն· Տ· ԹՕՓՃԵԱՆՑ·

Ի Սեմինարանոց.

ԿՏԱԿ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՐՎԱՐԴԵԱՆՑԻ·

Խոջագիր—Բնեան Աշտարակ Նամակագիրոյ·

ՅԱստրախան վերաբնակեալ Ղզլարեցի հայազգի Յարութիւն Ե· Փուրվարդեանց՝ կտակագրով ի 1853 ամի աւանդեալ էր յանուն Աստրախանայ Հայոց Ուսումնարանի զ4500 րուբլի դրամս: Ըստ տնօրէնութեան Վ·եհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ ի բանալ զծխական հոգեւոր երկսեռի Դպրոցս Հայոց յԱստրախան քաղաքի՝ Հոգաբարձութիւն Դպրոցաց տնօրէնութեամբ Հոգեւոր Իշխանութեան ստացաւ ի կտակակատարէ հանգուցելոյն ի Պարոն Աբրահամ Փասօյեանցէ նախ՝ ի զանազան ժամանակս ընդ ձեռն Թեմական Հոգեւոր Ատենի զ1800 րուբլիս, երկրորդ՝ ըստ լուծման Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան զմի քարաշէն տուն 6000 րուբլի արժողութեամբ հանդերձ կալուածագրով, ուր պարունակի Հոգեւոր Դպրոց Օրիորդաց, երրորդ՝ զհաշուեցուցակ ծախուց գումարի, արարելոց համաձայնութեամբ Հոգաբարձութեան ընդ ձեռն կտակակատար Պարոն Փասօյեանցի ի վերանորոգութիւն յիշեալ տան առ գումար 326 րուբլի 52 կոպէկի, եւ չորրորդ՝ ի հաշիւ նոյն կտակաւանդ գումարի զմի Դրամատոմսակ Աստրախանայ Քաղաքային Հասարակական Դրամատան, տուեալ միջանցեաւոր ժամանակաւ յանուն Հոգեւոր Ծխական Դպրոցի ի 11 յունիսի 1876 ամի համարաւ 500՝ գումարաւ 3610 րուբլի:

Ըստ այսորիկ՝ Հոգաբարձութիւն դպրոցաց համաձայն կտակագրի Ղզլարեցի Յարութիւնի Փուրվարդեանց յօրինելոյ ի 1853, եւ հաստատելոյ յԱստրախանայ Պալատան Քրէական Քաղաքական դատարանի ի 1854 ամի, ստացաւ ի կտակակատարէ հանգուցելոյն յԱստրախանցի Աբրահամ Գրիգորեանէ պարոն Փասօյեանց զկտակաւանդ 4500 րուբլի դրամս հանդերձ աճեցեալ 7236 րուբլի 52 կոպէկ տոկոսեօք, ընդ ամենն տասն եւ մի հազար եօթն հարիւր երեսուն եւ վեց րուբլի յիսուն եւ երկու կոպէկ արծաթի, յօգուտ եւ ի պէտս պահպանութեան Հոգեւոր Ծխական երկուց սեռից Դպրոցաց

Հայոց Աստրախանայ, եւ համաձայն կարգաւորութեան իւրոյ եւ կտակակատարի հանգուցելոյն պարոն Փասօյեանցի զապահովութիւնն վասն ստացման բոլոր գումարաց պատշաճաւոր վաւերացուցմամբ. իսկ առ ի յաւէրժացուցանել զյիշատակ անուան հանգուցեալ Յարութիւնի Փուրվարդեանց՝ կարգաւորեաց, մշտնջենաւորապէս ունել ի միջի դպրոցաց զմի աշակերտ ի դասակարգէ համազգի չքաւորաց, հոգալով զուսումն եւ զուսումնական պիտոյս նորա ի հաշիւ նոյն գումարի, անուանելով զուսանողն զայն «Սան հանգուցեալ Փուրվարդեանցի»:

Ի վերայ այսր ամենայնի Հոգաբարձութիւն Դպրոցաց դարձուցեալ զուշադրութիւն իւր որպէս ի բարեպաշտական ազգասիրութիւն ջերմեռանդ կտակարարի հանգուցեալ Յարութիւնի Փուրվարդեանց, նոյնպէս եւ ի յարդար կատարումն կամաց ի կտակակատար Աստրախանցի մերազնեայ Աբրահամէ Գրիգորեան պարոն Փասօյեանց, խոնարհաբար խնդրէ ի Խմբագրութենէդ, տպագրութեամբ յէջս Արարատ ամսագրոյ հրատարակել զայսմանէ յընդհանուր տեղեկութիւն համազգայնոց ամենից՝ ի ցոյց բաւականութեան եւ գոհունակութեան ի դիմաց հոգաբարձական վարչութեան:

Հոգաբարձուք Յովսէփ Ա. Բահմանայ Բունիաթեանց
Սիմէօն Պօպօվեանց
Միքայէլ Բուրջալեանց.

Համար 29.

Ի 30 Ապրիլի *) 1877 ամ,

յԱստրախան:

Յիշատակն բարերարաց եւ բարեպաշտից օրհնութեամբ եղիցի:

Ի ԹԻՖԼԻՍ.

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Նորին Վեհափառ Օծութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց օծման տասներորդ տարեդարձին պատճառաւ խիստ փառաւոր եւ մեծաշուք հանդէս կատարեցաւ Թէֆլիսու սուրբ Գէորգ աւագ եկեղեցումն: Բարձրահնչիւն զանգակներն բոլոր Հայոց եկեղեցեաց քաղաքիս դարձուցին ուշադրութիւնս ամենայն Հայ ժողովրդականաց, որք խուռն բազմութեամբ ժողովեցան աւագ եկեղեցին: Ո՛չ թէ միմիայն Հայազգի աստիճանաւորք, պատուելի քաղաքացիք եւ արհեստաւորք, այլ եւ բազմութիւն օտար ազգաց դիմեցին յեկեղեցի տեսանել շքեղութիւն հանդիսին: Մեծ Հոգաբարձուք երկուց սեռից ուսումնարանաց Հայոց եւ բոլոր վարժապետք եւ վերակացուք դասաւորեալ կարգաւ ընդ աշակերտաց Ս. Վարդանեան եւ աշակերտուհեաց Ս. Գայիանեան հոգեւոր դպրոցաց մտին յեկեղեցի եւ կանգնեցան հանդէպ տաճարին ի տես հանդիսավեհ տօնին:

Ց 8 երորդ ժամուն առաւօտեան ի 21 Մայիսի շաբաթ օրն սկսաւ Ս. Պատարագն, զոր մատոյց գործակատարն Հայոց Թէֆլիսի բարեկրօն Գէորգ աւագ քահանայն Տէր-Սարգսեանց: Ի ժամ Ս. Պատարագին աշակերտք ընդ ձայնագրագէտ ուսուցչին Ս. Տէր Սահակեանց ելեալ յատեան երգեցին ձայնագրեալ բոլոր երգեցողութիւն սրբոյ պատարագին: Այս կանոնաւոր կերպիւ ներդաշնակ երգեցողութիւնն, որ մեր Վեհափառ Կաթուղիկոսի ճիգն աշխատանաց պտուղն է, շատ տպաւորեցաւ ժողովրդականաց սրտի մէջ, որք լսեցին օրինաւոր կերպիւ համեղաձայն երգեցողութիւն մեր եկեղեցումն:

Ցաւարտ Ս. Պատարագին դասք քահանայից շքեղ զգեստաւորեալք՝ պարագլուխ իւրեանց ունելով հանդիսակատար Գէորգ աւագ քահանայն ելին յԱտեան եւ մաղթանք կատարեցին: Ցաւարտ սրտաշարժ մաղթանացն վասն երկար կենաց Վեհափառին հանդիսակատար Գէորգ աւագ քահանայն ելեալ բարձրացաւ ի բեմն եւ ընթերցաւ ըստ պատշաճի մեծահանդէս տօնիս զեղեցկայարմար ճառ բացատրելով զմիտս ճառին ի լուր ամենեցունց:

Ի վերջ ճառին աշակերտք եւ աշակերտուհիք դաս առ դաս կանգնեալք ի միասին երգեցին զերգս «Տէ՛ր կեցո՛ զՀայս» եւ ապա միւս երգն՝ «Փայլեսցէ լոյս Գրիգորեան, է լոյս ծագեալ մեզ Վեհն»: Եւ ապա խուռն բազմութեամբ դասաւորեալ կարգաւ դարձան յուսումնարան. ուր ես արարի ատենախօսութիւն բացատրելով մանուկներին այս տասնամեայ Տարե-

---

(*) Այս նամակ շատ ուշ հասաւ խմբագրութեանս:

դարձի հանդիսի նշանակութիւնն, յիշեցուցանելով Տ. Տ. Գէորգայ Դ Սրբազնագոյն կաթուղիկոսի ազգասիրական գործքերն իւր տասնամեայ Հայրապետութեան ժամանակն. եւ ապա արծակեաց աշակերտս եւ աշակերտուհիս ի պատիւ մեծահանդէս տօնին:

Ցերեկոյին կատարեցաւ լուսավառութեան մեծահանդէս քաղաքիս Ս. Գէորգ աւագ եկեղեցումն:

Ռ. ԵՐԶՆԿԵԱՆՑ ՀԱՂԲԱՏԵՑԻ.

Ահաւասիկ ընթերցեալ ճառը:

ԱՍՏՈՒԱԾԱՍԷ՛Ր ԺՈՂՈՎՈՒՐԴՔ.

Ի մեծահանդէս աւուր տօնիս լինծ միմիայն այժմ վիճակեցաւ ելանել ի հանդէս բանախօսութեան առ ի շնորհաւորել ընդ Ձեզ զտասնամեայ Տարեդարձն Օծութեան ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց Տ. Տ. Գէորգայ Դ. Սրբազնակատար Քահանայապետի, բազմելոյ ի Գահ Սրբազան առաքելոցն Թադդէի եւ Բարդուղիմեայ, եւ մերս սուրբ Լուսաւորչի մեծին Գրիգորի Պարթեւի: Ներեսցի ինձ այժմ ոչ լիակատար, այլ համառօտ բանիւք յիշեցուցանել Ձեզ զկատարեալ մինչեւ ցարդ գործոց Մերս Հոգեւոր Քահանայապետի, զորոյ տասնամեայ յաջող տարեդարձն տօնեմք ընդ Ձեզ ի մէջ սուրբ Տաճարիս մեծաւ հանդիսավեհութեամբ:

Նախախնամութիւնն ի սկզբանէ մինչեւ ցարդ պահեալ պահպանէ զՔրիստոսահիմն ուղղափառ Եկեղեցի մեր, յարուցանելով քաջարթուն եւ անձնադիր Հովիւս վասն յառաջադիմութեան ազգիս եւ բարեկարգութեան սրբոյ Եկեղեցւոյ:

Ցորէ զահակալութեան իւրոյ, Սրբազնակատար Հայրապետն Ազգիս Գէորգ Դ., որպէս քաջ Հովիւ եդեալ զանձն իւր ի վերայ բանաւոր Հօտի իւրոյ, եւ որպէս ժիր մշակ անպարտելի կաթուղիկէ Եկեղեցւոյ քաջարթնութեամբ հսկեալ եւ ցարդ հսկէ ի շինութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պաշտպանութիւն ուղիղ հաւատոյ. նմանապէս անքուն ակամբ եւ ազգասիրական հոգւով պարտաւորեալ միշտ բարեկարգէ բանալ զուսումնարանս ընդ ամենայն տեղիս Հայաստանի, եւ զառաջուց հիմնարկեալսն՝ որչափ մարթ է՝ զոյն գործէ զիւրին միջոցաւ պահպանել եւ կանոնաւորել, եւ նովաւ բանալ ճանապարհ լուսաւորութեան եւ յառաջընթացութեան ապագայ սերնդոց մերոց, ծնանել քարեջան անդամս ազգիս, պահպանել զկարգ եւ զկանոն յեկեղեցիս ի հոգեւորականս եւ ի ժողովրդականս:

Մարգարէն Դաւիթ իբրեւ ընտրեցաւ յԱստուծոյ ի Թագաւոր, եւ օծաւ իւղով սրբով, ասէ բանն Աստուածային, թէ՝ «Հանգչեալ հոգի Տեառն է վերայ Գառնիայ յորժամ յայտնեալ է առ յայտնոյն»: Եւ այժմ չեղեն ընդունայն քաղձանք ամենայն Հայոց, չեղին ի զերեւ խնդրուածք ողջոյն Եկեղեցւոյ, զի ամենօրհնեալն Աստուած բարձրացոյց զեղջիւր Օծելոյ իւրոյ: Այն սուրբ Հոգին անապառ եւ անդադար խաղաց ի վերայ Աստուածընտիր Քահանայապետիս մերոյ, եւ շնորհիւ այնր Հոգւոյ հանապազ Նա մատակարարէ մեզ ամենեցունցս հոգի դիտութեան, հոգի հեզութեան եւ աստուածպաշտութեան:

Ցաւուրս տասնամեայ Հայրապետութեան սորա բացան երկուց սեռից ուսումնարանք ի գաւառս ի նահանգս եւ ի գիւղօրայս Հայաստանի: Աթոռապատկան զանազան շինութիւնքն են կենդանի վկայք խնամատարութեանց Վեհափառին մերոյ: Տպարանն Սրբոյ Էջմիածնի պայծառացեալ ծաղկեցաւ, եւ հեռաքհեռէ հին եւ ընտիր մատենագրութիւնք ի լոյս ընծայեցան: Լուսաշաւիղ Արարատ ամսագիրն ի սկզբանէ մինչեւ ցայսօր տարփողէ յականջս Հայկազանց զաղափարս ուսման եւ յառաջադիմութեան: Օծեալն յԱստուծոյ Վեհափառ կաթողիկոսն մեր Գէորգ Դ, ի Սիոնի Սրբոյ Էջմիածնի կանգնեալ, դրոշմեալ ունի ի վեհ նակատ իւր զազգաշէն գործս, եւ բարի նախանձաւ կատարելագործէ օր ըստ օրէ զսկզբնաւորեալն յօգուտ ազգիս. ի սուրբ երեսաց նորա ելանեն մեզ իրաւունք, եւ աչք մեր տեսանեն զուղղութիւն: Օրինակի համար: Նորակառոյց Գէորգեան Ճեմարանն Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի են հրաշալի սխրագործութիւնք Նորին իւր բարի նախանձուն: Այն Ճեմարան ես ամենայն իրաւամբ նմանեցուցանեմ արեգական, որ՝ յարեւելից ելեալ տարածանելոց է զփայլուն ճառագայթս իւր մինչեւ ցալորտս տիեզերաց: Այս պատճառաւ եւ սուրբ սրտիւ բարձրացուցեալ զձեռս իմ ընդ Ձեզ ո՛վ բազմականք՝ աղաղակեմ ասելով «Կեցցէ արթուն

Հիմնադիրն Հայկազեան ճեմարանի եւ մի շարժեցի մինչեւ փառաւորապէս զառաջս ունիցի ամենայն ակնունելի արգելմանց: Այսուհետեւ Թող փայլեսցի ծիածանն Արարատեան ի նշան բարւոյ, եւ աղաւնին Նոյեան տապանի շիւղ ի բերան Թռուցեալ յաբեւելից յարեւմուտս քարոզեսցէ ջախջախել զգլուխ վիշապին տղիտութեան: Ես չեմ կարող մի առ մի բացատրել ո՛վ բազմականք, զսկսեալ եւ դեռ եւս զսկսանելի սիրազործութիւնս Վեհափառ Հօրն մերոյ, այլ Թողում պատմաբանից՝ իւր ժամանակին ապա, [illegible] դրոշմել զանուն եւ զմեծագործութիւնս նորա, որ ջանայ զոհել զանձն իւր վասն բարեկարգութեան եւ բարոյական փրկութեան Հայկական ազգիս:

Ի վերջոյ դարձուցեալ զերեսս իմ յԱԹոռ ամենաբարձրելոյն Աստուծոյ Թափօրական մաղԹանօք համախմբեալ դասիւք միաբան քահանայիցս ընդ շքանշան պաշտօնաւորացդ, մեծարոյ քաղաքացւոցդ, արհեստապետ եւ արհեստաւոր ժողովրդականացդ, ընդ աւագ եւ կրտսեր վարժապետացդ հանդերձ աշակերտօքս եւ աշակերտուհեօքս վերառաքեալ զջերմագին պաղատանս յաԹոռ յաւիտենականին Աստուծոյ կնքեմ զբանս ասելով «Թագաւոր երկնաւոր, հաստատեա́ զաԹոռ ինքնակալ կայսեր մերոյ Աղէքսանդրի Բ· պահպանեա́ Տէր զհայրախնամ փոխարքայն մեր մեծ Իշխան Միխայել Նիկոլայեւիչ· օրհնեա́ տէր եւ զամենեսեանս, որք տօնեցաք ի մէջ տաճարիս հանդէս տասնամեայ Օծութեան Նորին Վեհափառութեան:

Միաբան ասասցո́ւք ի միասին՝ «կեցցէ Վեհափառ ԿաԹուղիկոսն մեր երկար կենօք վասն կատարելագործելոյ զսկսեալ ազգաշահ գործս իւր, հաստատուն պահել զՄայր ԱԹոռն մեր Ս· Էջմիածին, եւ առ ի մի յօղ ղուգել զցրուեալ ազգ մեր: Կեցցէ ընտիր Քահանայապետն մեր եւ Նաւապետն բարի առ ի հասուցանել զզինուորեալ Եկեղեցիս իւր ի նաւահանգիստն յաւիտենական երջանկութեան· ամէն:

ԳԷՈՐԳ Ա· ՔԱՀ· Տ· ՍԱՐԳՍԵԱՆՑ·

ՅԱԽԱԼՑԽԱՑԷ·

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ·

Թեմական վերատեսուչն միջնակարգ եւ ծխական Գպրոցաց վիճակին Հայոց Վրաստանի եւ Իմէրէթի Ազնուամեծար Պ· Յակովբ Տէր Յովհաննէսեանցն պաշտօնական գրութեամբ ի 11-ն ամսոյս, ընդ համարաւ 67, առաջարկած էր որպէս Հոգաբարձութեանս, նոյնպէս եւ իւր օգնական Պ· Մովսէս Սամուէլեանցին՝ Վեհափառ ԿաԹուղիկոսի Օծման տասներորդ տարեդարձի մասին ազատել ուսումից աշակերտաց եւ աշակերտուհեաց Ախալցխայ բոլոր Հայոց ուսումնարանաց՝ ժողովել զնոսա եւ տանել Եկեղեցի՝ Ս· Պատարագին բոլոր ուսուցչաց հետ ի միասին· իսկ պատարագէն ետք՝ վերադառնալ կրկին ուսումնարան, եւ բացատրել նոցա այն օրուայ հանդիսի նշանակութիւնը: Եւ ահա́, այս առԹիւ, մեք եւս որպէս անդամ «Նոր — արշալոյս» վարժարանի հոգաբարձութեան՝ ի դիմաց աշակերտուհեաց՝ յօրինած էինք մի ներբող· զոր եւ ընԹերցաւ ուսումնարանի մէջ առաջի հանդիսականաց՝ առաջին աշակերտուհի Դշխուհի Տէր Գրիգորեանցն. Ներբողէն ետք՝ հիմնադիրն «Նոր արշալուսոյ» Մեծապատիւ Պ· Ռափայէլ ՍաղաԹիէլեանց՝ սկսաւ բացատրել աշակերտուհեաց Վեհափառ ԿաԹուղիկոսի ազգասիրական գործքերը, եւ ներբողի մէջ պարունակուած խորհրդաւոր մտքերն մեկնել. որոյ ամեն մէկ տողէրէն պարզօրէն կնկատուէր մեր սրտի անկեղծ զգացմունքներն եւ դիտողութիւնք՝ Վեհափառ ԿաԹուղիկոսի ազգասիրական եւ ուսումնասիրական վսեմ գործոց վրայ հիմնաւորուած· բայց այս հանդէսէն յառաջ՝ այս ինքն նախ քան Եկեղեցի գնալն, Տեսչի օգնական վերոյիշեալ Պ· Սամուէլեանցն՝ որովհետեւ գիտէր որ չէր կարող ներկայ լինել մեր հանդիսին՝ Կարապետեան եւ Եղիսաբեթեան ուսումնարաններու վերայ հսկողութիւն անելուն պատճառաւ, ուստի՝ ազդու եղանակաւ մը եւ ոճով՝ սկսաւ հրաւէր մը կարդալ աշակերտուհեաց՝ հանդիսաւոր անելու Վեհափառի Օծման տասներորդ տարեդարձն:

ԵՂԻՇԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆՑ·

Ահաւասիկ յիշատակեալ ուղերձը:

ՆԵՐԲՈՂ

Ի ՀԱՆԴԷՍ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՕԾՄԱՆ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տ Տ ԳԷՈՐԳԱՅ Դ․

Ի դիմաց աշակերտուհեաց «Նոր — արշալոյս»
Օրիորդական ուսումնարանի Հայոց Ախալցխոյ․

Շնորհաւո՛ր քեզ այս օր՝ Ա՛յրարատ,
Մայր մեր անարատ․
Տօնելի՛ օր, հանդիսաւոր, եւ փառաւոր
Տասներորդ տարեդարձի օծման՝
Հայրապետին մեր Սրբազան։

Թո՛ղ հնչէ այսօր իմ յԱրարատայ աւետեաց Զանգակ՝
Յիշել անձկանօք, Տէր մեր Վեհափառ, Քոյդ Օծման պսակ․
Ձեօ՛ք պիտի զարթին՝ մեր Նախնի Սուրբ Հարց տխուր քնարներ՝
Ձեօ՛ք ահա՛, վառին Մասեաց ի գագաթ՝ ուսման լապտերներ,
Տառապեալ Ազգիդ ապագայ կենաց՝ պատրաստել Նոր Դար
Լուսաւորութեան, բարեկարգութեան, յոյժ իմաստնաբար․
Դուք պէտք է կանչէք զմեզ ի հանդէս Ազգային Սիրոյ՝
Ուր որ Հայրենեաց Ոգին անուշակ՝ հսկէ ի վերոյ։
Բայց թէ, ի մեր սէր՝ ինչքան որ քրտինք թափեցէք այն օր,
Ինչ ճիգ որ ըրիք, զոր ինչ որ տարաք, ո՜հ, մինչեւ ցայսօր,
Գրուեցան նոքա յիշատակարան Հայոց Ազգութեան․
Ամեն Հայու սիրտ՝ խոր դրոշմեցան, անջինջ յաւիտեան։
Մեք Հայքս՝ զքեզ պահեմք ի սրտի, զինչ անգին գոհար՝
Ի մէջ գեղեցիկ պատուական տփոյ՝ շա՛տ սիրողաբար․
Զեմք անմխիթար։ թէեւ ինկած եմք հայրենի փառքէն՝
Սակայն կրօնի լուսով գիտութեան՝ կամք միշտ քաջազէն․
Սփռէ Դու՝ ո՛վ Հայր, գիտութեան սուրբ սերմն՝ մեր մտաց արտեր,
Որով, իր ժամուն՝ վայելեմք անտի զարդիւնս կենսաբեր։
Այս յուսոյ մէջն է, Մայր մեր Հայաստան, եւ Հայ Մանկտուհին
«Նոր — Արշալուսոյ» ուսումնարանիդ՝ Տայոց աշխարհին․
Որ եւ ազգութիւն իմի սուրբ ոլոր՝ կտօնէ այսօր
Զտօն հանդիսի Օծման Քաջ Հովուիդ՝ գերապանծ, հզօր։

ԵՂԻՇԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԾԱՅՈՒՆԵԱՆՑ․

Ի 22 Մայիսի 1877 ամի
յԱխալցխա․

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ․